№ 53 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 10

1906

ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 10 № 53

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նատալիա Բէգլարեան, Հռիփսիմէ Կարապետեան Ղազանջեանները, Սաթենիկ Դալթեան, Հայկանուշ և Յակովբ Բէգլարեան Մովսիսեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինը իր անմոռանալի ամուսնու, երկրորդը՝ սիրելի հօր, իսկ վերջինները իրանց բազմերախտ փեսայ՝

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼԵԱՆ ՂԱԶԱՆՋԵԱՆՑԻ

մահը: Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ, շաբաթ օրը, ամսիս 11-ին, առաւօտեան ժամի 10-ին, իր բնակարանից Разъѣзжая ул. № 15 (Վօրօնցօվի արձանի մօտ) դէպի Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցին: Ամբիծքը ուրբաթ, երեկոյեան ժամի 6-ին:
(հ.ու.) 2—2

Սրբուհի Աստուածատրեան Գասպարեանցը և Եղիսաբէթ Թադէոսեան Ստեփանբէգեանը ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր թանկագին ամուսնու, իսկ երկրորդը իր սիրելի եղբօր՝

ՍԱՐԳԻՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 7-ին երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ: Ամբիծքը այսօր, ուրբաթ, մարտի 10-ին, երեկոյեան ժամը 6-ին: Յուղարկաւորութիւնը շաբաթ, մարտի 11-ին, առաւօտեան ժամը 10-ին իր սեփական բնակարանից (Հավլաբար, Հավլաբարսկի փողոց, № 1, սեփական տուն) դէպի ս. Մինաս եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 1—1

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐԻՆ ՆՈՒԷՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ

1) «Որբիկների արցունքները»	30 կ.
2) «Երկու պահլաւան», (Սասունի հիմնադիրները)	25 կ.
3) «Պատիկ Մհեր»	25 կ.
4) «Սասունցի Դաւիթ», I հ. 40 կ. II հ. 40 կ. նոյնը մի գրքում.	80 կ.
5) «Զգացմունք»	40 կ.
6) «Հենրիխ Պեստալոցցի» (մանկավարժական).	30 կ.

Այս գրքերի վաճառման արդիւնքի 20% յատկացվելու է դժբաղդացած կողէնցիների օգտին: Դիմել Կենտրոնական, Գուտտէնբերգ, Թառայեան և Զաքարեան գրավաճառներին, իսկ հեղինակին դիմողները կըստանան 30% զեղչ, կուղարկվի կանխիկ, նաև վերադիր վճարով: Հասցէն՝ Шулаверъ, Григорію Баласанянцъ. (առ) 5—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անմեղ և մեղաւոր. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Մտքեր և փաստեր. Տեղեկութիւններ գաւառից. Ընտրութիւնները Կովկասում. Հայոց հարցը և նախագահ Րուզվելտը. Մի փոքր էլ մտածէք. Մօսկվայի նահանգական զեմստվօյի կօնֆլիկտը. Բօչի հարցի առիթով. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժողովրդական ազատութեան կուսակցութեան.

ԱՆՄԵՂԸ ԵՒ ՄԵՂԱՒՈՐԸ

Մեր ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Գանձակի նահանգի զանազան մասերում բանտարկվել են հայեր և Թուրքեր, իբրև մեղսակիցներ հայ-Թուրքական ընդհարումների գործի մէջ:

Բանտարկված հայերի մեծագոյն մասը բոլորովին անմեղ է և նոյն իսկ մասնակցութիւն չէ ունեցել ռազմական գործերում և ընդհարումներում: Բանտարկվածները, լինելով իբրև չարամիտ մատնութեան զոհեր, անկասկած, ամեն կերպ կը ցանկանային շուտով ազատվել և վերադառնալ իրանց տները: Սակայն նրանք, ինչպէս մեզ յայտնում են, մի յայտնի աստիճան մխիթարութիւն ունեն այն հանգամանքի մէջ, որ միաժամանակ իշխանութիւնը սկսել է զսպել Թուրք խառնակիչներին և ղեկավարներին:

Որպիսի դառն հեգնութիւն տիրող կարգերի վրա: Մարդիկ պատրաստ են անմեղ զոհեր լինել, միայն թէ իսկական մեղաւորները պատժվեն և սաստվեն:

Արդարև, տեղացիների լօգիկան գործնական արդիւնքների մասին է հոգում: Հաշտութեան մասին անկեղծ մտածող և նրան կարօտ հայը լաւ գիտէ, որ անգէտ ամբոխը միայն այն ժամանակ խելքը գլուխը կը ժողովէ և կը զգաստանայ, երբ կը տեսնէ, որ յանցաւորները պատժվում են, Թալանները վերադարձվում են և ոչ մի շահ չէ մնում այն մարդու ձեռքում, որ Թոյլ էր տուել անգութ և ապօրէնի գործեր: Եթէ Թուրք ամբոխի մէջ արմատացած է եղել այն համոզմունքը թէ նրա արածը համապատասխան է իշխանութեան տրամադրութիւններին, ինչ եղանակով կարելի կը լինէր փոխել այդ համոզմունքը և նրա տեղ դնել մի ուրիշը, բոլորովին հակառակը: Իսկ չը պէտք է մոռանալ, որ կոտորածների և աւերումների հեղինակները շըշմեցնում են եղել Թուրք ամբոխը այդ տեսակ հաւաստիացումներով և քաշում նրան իրանց ետևից:

Եւ հէնց որ սկսվեցին մի քանի խուզարկութիւններ և նոյն իսկ ամենաԹոյլ պատիժներ, իսկոյն իրարանցում ընկաւ խառնակիչների շրջաններում: Նրանք զգացին իրանց հիասթափված, մոլորութեան զոհ դարձած և սկսեցին փոխել իրանց լեզուն ու յարաբերութիւնները:

Բայց մենք այնու ամենայնիւ չենք կարող հաշտվել այն հանգամանքի հետ, որ հալածանքի և զրկանքների են ենթարկվում անմեղ մարդիկ: Դա նախ և առաջ անարդարութիւն է, որ չը պէտք է տեղի ունենայ: Բացի այդ ամեն մի պատիժ, որ անարդար է, կրելով իր մէջ արդար բողոքի սաղմը, Թուլացնում է պատժի բարոյական նշանակութիւնը և կամաց կամաց կարող է վարկաբեկ անել այն կարգադրութիւնները, որոնք արվում են բարի նպատակներով:

Անմեղը չը պէտք է պատժվի. դա մի այնպիսի պահանջ է, որ չը պէտք է մոռանալ և անտես անել:

Թող պատժվող մարդկանց Թիւը քիչ լինի, բայց մեղաւորութիւնը կասկածելի չը լինի: Միայն այն ժամանակն է յանցաւորը իսկապէս դատապարտված, երբ յանցանքը գոյութիւն ունի իսկապէս:

Եթէ կան անմեղներ, որոնք հաշտվում են պատժի հետ, միայն թէ մեղաւորները պատժված լինեն, ապա ուրեմն, որքան կարևոր է, որ իսկական մեղաւորների պատճառով անմեղները չը զոհվեն:

Մեր տխուր իրականութիւնը անսպառ է օտարոտի երևոյթներով:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երէկ, մարտի 9-ին, Գանձակի գաւառի աւերված Բաղա գիւղի բնակիչները դիմեցին Փոխարքային խնդրելով, որ նրանց ձրի տոմսակներ տրվեն Գանձակ գնալու և այնտեղից իրանց գիւղում հաստատվելու համար: Բաղացիների խնդիրքը մատուցին տիկիններ Առստամեան և Պատերմաջեան: Փոխարքան հարց ու փորձ արեց գիւղի մասին, յայտնեց, որ բաղացիները կարող են ապահով վերադառնալ իրանց գիւղը և յանձնեց խնդիրը իր դիւանատանը:

Փոխարքան տեղեկութիւն է ստացել Ղազախի զօրամասի հրամանատար գեներալ Լեվիցկուց, որ Ղազախի գաւառում արդէն խաղաղութիւն է տիրում և գիւղացիները դուրս են գալիս դաշտային աշխատանքներ կատարելու:

Գանձակից հեռագրում են ռուսաց հեռագրական գործակալութեան մարտի 1-ից.

«Շնորհիւ գաւառապետ Ավալեանի ձեռք առած եռանդուն միջոցների վերադարձված է 80 գլուխ անասուն, որ քշել էին Գանձակի գաւառի փախստականները Ղազախի գաւառից: Դալեարցիներից ժողոված է 15,000 րուբլի կայարանների խողովակների կողոպտման համար, իսկ բնակիչներից խլված է զանազան սիստեմի 100 հրացան»:

Փետրվարի 21-ին, Ջիւլգադարովի կալուածքի Սամանլիկ կոչված ձմերանոցի Թուրք ամբոխը Ֆրէզովօ ռուսաց գիւղում բռնեց չարդախլուեցի մի ծերուկ հայի. իր փրկութեան համար այդ ծերուկը ամբողջապէս պարտական է ռուս գիւղացիների եռանդուն միջամտութեան, որոնք Թոյլ չը տուին Թուրքերին սպանել նրան և ազատեցին սամանլիկցիների արիւնոտ ճանկերից:

Նախկին Բաղա գիւղի շրջակայքում, որը այժմ այրված է ու աւերված, դեռ մինչև օրս էլ ցան ու ցիր ընկած են ոչ թէ մէկ կամ երկու, այլ բազմաթիւ դիակներ՝ նեխված, գիշակերների բաժին դարձած:

Դատաստանական քննիչը ծանրաբեռնված է պաշտօնական հաղորդագրութիւններով, Թափթփված դիակների մասին, որոնք 300-ի են հասնում: Իսկ որքան դիակներ կան դեռ Թափթփված, որոնց մասին պաշտօնական հաղորդագրութիւն չէ եղել: Բաղա գիւղացիների դիակների մասին, օրինակ, շատ քիչ մարդիկ են իմանում:

Կօզակները, երբ նոր ուղարկված էին այստեղ, փորձեցին հաւաքելու նրանց, բայց այն ժամանակ դեռ կրքերը շատ խիստ լարված էին. կօզակներին դիմաւորեցին գնդակների խաչաձև կրակով և նրանք յետ նահանջեցին ու սկսեցին պահպանել Գետաբեկի տրակտը միայն, իսկ դիակները մինչև այժմս էլ մնում են իրանց տեղերում:

Գաւառական կամ գիւղական բժիշկներ Գանձակում չը կան, գոնէ տողերիս գրողը այդ պաշտօնավարներին չէ տեսել գաւառում ոչ մի տեղ: Եւ զարմանալի էլ չէ, այն րայօնում, որի մասին ես այժմ խօսում եմ, առհասարակ չեմ տեսել վարչական պաշտօնեաների նոյն իսկ և գոնէ ուրիշ ոչ ոք էլ չէ լսել նրանց մասին:

Ոստիկանական պահակների պահականոցները, որոնք մինչև այժմ ցիր ու ցան ընկած էին զանազան գիւղերում, բոլորովին աւերված են, մուսուլման պրիստաւները չեն այցելում, և կէս տարուց աւելի է, որ հաշտարար միջնորդներին ոչ ոք չէ տեսել:

Գաւառում շրջագայող զօրամասերը զբաղված են բացառապէս ազգաբնակութիւնը զինաթափ անելով, որի համար գործադրվում է նոյն իսկ արտիլլերիա:

Փետրվարի 23-ին և 24-ին Թնդանօթներով ռմբակոծութեան ենթարկեցին Վերին Ղարամուրադ, Ներքին Գերգեր և ուրիշ գիւղերը, և դրա հետևանքն այն եղաւ միայն, որ ազգաբնակութիւնը յանձնեց մի երկու տասնեակ անգործածական, անպէտք հրացաններ:

Փետրվարի 28-ին նշանակված էր Դալեար և մուսուլմանների աուլների մօտիկ գտնվող ուրիշ գիւղերի ռմբակոծութիւնը, եթէ միայն, ի հարկէ, ազգաբնակութիւնը չի յօժարվի զէնքերը յանձնելու: (K)

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Փօթի. Անգութ րէակցիայի խրախուսանքի շնորհիւ բացի դժբաղդութիւնից ոչինչ լաւ բան տեղի չունեցաւ: Փետրվարի 10-ից սկսած մինչև այսօր Փօթիի բնակիչները շատ նեղ դրութեան մէջ են գտնվում: Պաշարողական դրութիւնը հէնց իրանց րէակցիօներների շնչառութիւնն էլ է կապում: Երանի իմանայինք, ինչ յանցանք գործեցինք, որ այսպէս տանջում են մեզ: Բայց ներկայ ժամանակ ամեն բան սպասելի է: Քաղաքում պաշարողական դրութիւն հաստատվելուց յետոյ բոլորովին դադարեց առանց այն էլ երկչոտ կեանքը: Դադարեց ամեն տեսակ շարժում և առևտուր: Մարգանից արտահանողները սաստիկ իրարանցման մէջ ընկան: Արտասահմանի նաւերը, որոնք այստեղ են հաւաքվել մարգանից տանելու, համբերութիւնից դուրս եկան, որովհետև չը կարողացան ժամանակին բեռնաւորվել: Բանւորները չեն կարողանում ազատ դուրս գալ գործի, որի պատճառով կիսով չափ քաղցած են մնում, բայց նրանց ցաւին ով է դարման անողը: Մարգանից արտահանողները մի քանի անգամ դիմեցին իշխանութեանը, որպէս զի բանւորներին Թոյլատրվի ազատ իրանց գործը վարելու, մանաւանդ գիշերները պէտք եղած ժամանակ, բայց մինչև այժմ էլ պատասխան չեն ստացել: Թէև պաշարողական դրութիւնը մտադիր է իր ոխը հանել անմեղ ժողովուրդից, բայց կարծեմ դա բիւրօկրատիայի գրպանին շահաւէտ չէ: Նաւահանգստի գործունէութիւնը որ կանգ առաւ, մաքսատան մէջ սովորական ոսկիները այլևս չեն երևում: Երկաթուղին այժմ արագ է բանում: Գիշերները հաւքով անցնելը վտանգաւոր է: Ճանապարհին մի քանի անգամ կը խուզարկեն: Եթէ գիշերը կայարանում իջնէք վտանգը կրկնակի է. կամ կայարանում կը Թողնեն լուսացնել, կամ կը տանեն ոստիկանատուն: Ահա այս տեսակ վիճակի մէջ է ընկել քաղաքը գեներալ-նահանգապետի յայտարարութիւնից յետոյ: Ինչ վերաբերում է քաղաքական յանցաւորների ձերբակալութեան, այստեղ օրէցօր աւելանում է: Այս օրերս բանտից ազատեցին քաղաքային ուսումնարանի ուսուցիչ Չխաիձէին և պ. Կասսօրինին, որոնք մի լրտեսի ցուցմունքով բանտարկված էին: Յունվարի 15-ից յետոյ հրդեհի և յանկարծակի աւերումների դէպք չէ եղել: Կարծես սուրբ հոգի է իջել անողորմ զօրքի սրտերում:

Րէակցիան, ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ արմատախիլ արեց բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները: Զօրքի քաղաքում մնալը քաղաքային գանձարանին ահագին փող նստեց: Բազմաթիւ անսպասելի ծախքերի պատճառով, փակեցին քաղաքային հիւանդանոցը, որ մի քանի մահացու վիրաւորված հիւանդներ առողջանում էին: Պաշտօնից արձակեցին հիւանդանոցի բժշկին և բոլոր ծառայողներին, որոնց ռոճիկները, հիւանդանոցի միւս ծախսերի հետ միասին, ընդամենը քաղաքին նստում էր 8000 րուբլուց ոչ աւելի: Ահա 2-րդ ամիսն է որ ժողովրդական ընթերցարանը փակ է: Այս տեսակ օրինակներ շատ կան:

«Ցնօբիս Փուրցելի»

ՄԱՄՈՒԼ

Պէտք է գնալ Պետական Դուման, Թէ ոչ—այս հարցն է այժմ զբաղեցնում ռուսաց հասարակութիւնը և մամուլը: Աւելի սուր կերպով ևս տրվում է այս հարցը. պէտք է ոչ միայն չը գնալ, քարոզում են ուրիշները, այլ և բօյկօտի ենթարկել Դուման, այսինքն աշխատել, որ ոչ ոք չը գնայ: Եւ ինչ կը լինի սրա հետևանքը, ինչ օգուտ կը ստանայ երկիրը և ժողովուրդը այդ բօյկօտից: Այս վերջին հարցին պատասխանում է պրօֆէսօր Մակսիմ Կօվալևսկու «Ստրանա» լրագիրը մի առաջնորդող յօդուածով՝ «Պատրաստվեցէք Դումայի համար» վերնագրով:

Նա բացատրում է, որ Պետական Դումայի մասին հրատարակված նոր կանոնադրութիւնը մի ձգտումն ունի—Թուլացնել ժողովրդի ազատ ներկայացուցչութիւնը, աշխատելով, որ նրա մէջ մտնեն այնպիսի անձինք, որոնց միջոցով կարելի լինի պահպանել իշխանութիւնը հին րէժիմի ներկայացուցիչների ձեռքում: Այդ պատճառով էլ հասարակութեան մէջ լսվում են Դուման բօյկօտի ենթարկելու կոչի ձայներ: Բայց դա սխալ քայլ է և ահա ինչու: Եթէ քննենք երկրի վիճակը, կը տեսնենք, որ ահագին և անյետաձգելի գործեր կան կատարելու: Պետութեան ֆինանսները բոլորովին քայքայված են և սպառված, ամեն տեղ կորել է վստահութիւնը դէպի նրանց ամրութիւնը: Արդիւնաբերութիւնը ընկել է, անգործութիւնը տարածվում է, աղքատութիւնը արագաբար աճում է և ագրարային շարժումները Դամօկլեան սրի պէս կախված են մեր գլխին: Կենցաղական կեանքի մէջ տիրում է անիրաւութիւնը, կամայականութիւնը և զրկումն Թէ լայն խաւար մասսաների և Թէ կրթված շրջանների: Լուսաւորութեան աշխարհում—միայն աւերակներ են. հին տօլստօյական սիստեման կործանվել է, նրա աւերակների վրա նորը չէ ստեղծվել և ուսման միջոցները դարձել են տգիտութեան սերմարաններ: Զօրքը շատ լաւ պատրաստել են ներքին ճնշումների և ոչ Թշնամու հետ կռուելու համար, իսկ նաւատորմիղը մասամբ ոչնչացրված է, մասամբ մնացել է աւանդապահ նոյն կարգերի, որոնք հասցրին նրան անզօրութեան և անբարոյականացման: Արդարադատութիւնը իր բնաւորութեամբ մօտեցել է ոստիկանութեան և շարունակում են դուրս նետել նրանից այն օգուտ մնացորդները, որ պէտք է կազմեն նրա արժանաւորութեան հիմքը: Նայեցէք որ կողմը կուզէք—չը կայ մի կենդանի տեղ. ամեն տեղ կը տեսնէք միայն աւերակներ, խեղաթիւրումներ և ոչ մի առողջացուցիչ բան: Քայքայված է և պետական զօրութիւնը և տնտեսական մարմինը և հոգևոր կեանքը: Կառավարչական շրջանում «չը կան մարդիկ» և չեն կարողանում գտնել, որովհետև բոլոր ընդունակ և բարոյապէս անկախ անձինք քշվել են ասպարէզից շատ հեռու այն սիստեմով, որ երկար ժամանակ մեռցնում էր մարդկային նախաձեռնութիւնը և նպաստում էր կարիերիզմին և նեպօտիզմին: Մարդ սարսափում է, երբ շրջահայեաց լինելով, կամենում է համարձակ տեսնել ճշմարտութիւնը և սարսափը աւելի, մեծանում է, երբ մտածում է ապագայի մասին, այն պատահականութիւնների և բարդութիւնների մասին, որոնք կարող են տեղի ունենալ: Եւ հաշմանդամ եղած երկիրը այդ չար քաօսից հանելու համար ահագին ստեղծագործական ոյժ է պէտք:

Եւ ահա այդ ստեղծագործական ոյժը ի նկատի ունենալով, լրագիրը խորհուրդ է տալիս, որ բոլոր ընդունակ և ազնիւ անձինք աշխատեն մտնել Դուման և Թոյլ չը տան, որ հին րէժիմը այնտեղ ունենայ իր պաշտպաններին:

Սակայն, եթէ ի նկատի ունենանք, Թէ զանազան տեղերում ինչպէս է վերաբերվում ժողովուրդը ընտրութիւններին, պէտք է մեծ երկիւղ կրենք, որ հին րէժիմը կարող է այդ հարցում ևս յաղթական դուրս գալ: Հեռագիրներից շարունակ կարելի է տեսնել, որ ազգաբնակութիւնը մեծ անտարբերութեամբ է վերաբերվում և մեծամասնութեամբ ընտրվում են քահանաներ և զանազան գրագիրներ, հին րէժիմի լաւագոյն ջատագովները:

*

Ոչ նուազ մռայլ գոյներով է նկարագրում երկրի վիճակը և «Рус. Вѣд.» լրագիրը: Լրագիրների մէջ մի լուր երևաց, Թէ Անդր-Բայկալեան շրջանում գեներալ-նահանգապետ Րենէնկամֆը մի յայտարարութիւն է հրատարակել, ուղղված ժողովրդին, որի մէջ ասված է, որ եթէ որ և է մահափորձ լինի իրան գեներալին ուղեկցող ոստիկանների և ժանդարմների կեանքի դէմ, մահափորձից մի ժամ յետոյ, բանտարկված պատանդները պէտք է գնդակահար լինեն: Ուրեմն առանց դատաստանի, քննութեան, ով մահափորձը կատարված ժամանակ բռնվելու դժբախտութիւնն ունեցաւ, նոյն իսկ պատահմամբ գտնվողները, պէտք է գնդակահար լինեն: Այդ առիթով լրագիրը ասում է.

«Պարիզի կօմմունայի յիշողութեան վրա ամենամեծ արատը համարվում է պատանդների գնդակահարումը: Բայց ինչ ասենք այն անձի մասին, որին տրված է ահագին իշխանութիւն և որն ունի մեծ զինուորական ոյժ և այնուամենայնիւ այդպիսի միջոցների է դիմում: Ի՞նչ ասենք այն կառավարութեան մասին, որ Թոյլ է տալիս այդպիսի սարսափներ: Ի՞նչ ասենք այն Թշուառ երկրի մասին, որ գտնվում է այդպիսի փորձ անողների ձեռքում: Իւրաքանչիւր օրը բերում է մեզ բարոյական մԹագնման նորանոր ապացոյցներ: Ո՞վ կը կանգնեցնէ անիրաւութեան և մարդատեցութեան այս համաճարակ ախտը»:

*

Կողոպտիչները, աւազակները, հրոսակախմբերի պետերն ևս սկսել են գոռալ մամուլի մէջ «Audiatur et altera pars»: Եւ ինչու չը գոռան, մի անգամ, որ անպատիժ կարելի է աւազակել, աւերել, Թալանել և մնալ ազատ, առանց ենթարկվելու որ և է պատասխանատուութեան, ինչու չաշխատել հասարակական կարծիքի առաջ ևս արդարանալ, Թող փչել հասարակութեան աչքին, անմեղ գառնուկ ձևանալ: Հէնց այդ միջոցին էլ դիմել է Նախիջևանի արիւնահեղ դէպքերի հերոսներից մինը, Թուրք պրիստաւ Րահիմ-խանը, Նախիջևանի խաների արժանաւոր ներկայացուցիչներից մինը: «С. Петерб. Вѣд.» լրագրի փետրվարի 26-ի համարում (№ 45) նա գրել է մի յօդուած «Audiatur et altera pars», որով ջանում է ապացուցանել, որ Նախիջևան քաղաքի և գաւառի արիւնահեղ դէպքերի, կոտորածների, Թալանի մէջ մեղաւոր չեն Թուրքերը, այլ հայերը, որոնք համբերութիւնից հանեցին այդ բարի Թուրքերին և գրգռեցին նրանց մէջ զայրոյթ և կատաղութիւն:

Խանի կարծիքով, Նախիջևանի մայիսեան դէպքերի ոչ նախաձեռնութիւնը, ոչ էլ պատասխանատուութիւնը մուսուլմաններին չէ պատկանում: Խանի կարծիքով, տեղական վարչութիւնը և ոստիկանութիւնը ևս ոչ մի բանի մէջ մեղաւոր չէ, ոչ կողմնակալութեան, ոչ պրօվօկացիայի մէջ և նա ծիծաղելի է համարում, երբ հայերը պահանջում են կորրեկտ և հովանաւորական վերաբերմունք դէպի հայերը երկրի այն վարչութիւնից, որի դէմ նրանք առաջուց ուղղել էին հայ գաղտնի յեղափոխական կազմակերպութիւնների տէրրօրիստական գործողութիւնները: Եթէ վարչութիւնը նոյն իսկ մեղաւոր լինի, հայերը պէտք է մեղադրեն ոչ Թէ նրան, այլ իրանց կօմիտէտներին. նրանք հնձեցին այն, ինչ որ սերմանել էին:

Յամենայն դէպս հոչակաւոր խանը չէ հերքում այն փաստը, որ ոստիկանութիւնը և վարչութիւնը շատ էլ անմեղ չէ, բայց եթէ Թոյլ տուեց կոտորել անմեղ ժողովուրդը, աւերել, Թալանել հայ գիւղերը, դա հասկանալի է, որովհետև հայ կօմիտէտները տէրրօր էին ենթարկել ոստիկանութեան և վարչութեան մի քանի ներկայացուցիչներին: Խանը իր յօդուածի մէջ չէ հերքում և այն փաստը, որ Թուրքերը կողոպտել, Թալանել, հրդեհել են հայ գիւղերը, այլ բացատրում է այդ միայն նրանով, որ կողոպտողները, Թալանողները եղել են խուլիգանները և խառնիճաղանճ ամբոխը, որոնց գիշատիչ հակումները գրգռեցին իրանք հայերը...

Խեղճ Թուրքեր—պէտք է բացականչէ ամեն մի ընԹերցող, կարդալով այդ յօդուածը. տեսէք ինչ անիրաւ մարդիկ են այդ հայերը, որ գրգռեցին նրանց գիշատիչ և գազանային հակումները: Դրա համար հայերը պատժի են արժանի...

Ի՞նչ խօսել այդպիսի լրբութեան հանդէպ:

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XXXIII

Հայ-Թուրքական համագումարը աւարտեց իր պարապմունքները:

Այժմ կարելի է հարցնել՝ ինչ արեց նա:

Ի՞նչ էինք ակնկալում և ինչ տուեց նա:

Իբրև գործնական արդիւնք, նա քիչ բան տուեց և այդ հանգամանքը շեշտեց իր ճառի մէջ նաև Փոխարքան:

Բայց արդար լինելու համար, պէտք է ասել, որ ոչ ոք մեզանից չէր էլ սպասում, որ խորհրդակցական ձայնով գումարված մի ներկայացուցչական ժողով կարողանար որ և է իրական, գործնական արդիւնք արտադրել, որ և է ազդեցիկ, կտրուկ միջոց մշակել հայ-Թուրքական ընդհարումներին վերջ դնելու համար: Այդ կողմից սկզբում ամենքն էլ սկեպտօրէն վերաբերվեցին համագումարի գործունէութեան, քանի որ կրկնում ենք, նա կոչված էր միայն խորհուրդներ տալու, միջոցներ առաջարկելու, ցոյց տալու կառավարութեան այն պատճառները, որոնց շնորհիւ առաջացաւ սոսկալի աղէտը և դեռ շարունակվում է:

Սակայն, ինչպէս մեր անցեալ յօդուածներում շեշտեցինք, համագումարը ունի հասարակական և բարոյական նշանակութիւն: Այդ կողմից համամիտ է տեղական մամուլի մեծ մասը, ընդունելով նոյն իսկ համագումարի Թերութիւնները:

Մի կողմ Թողնենք այն հարցը, Թէ պատգամաւորները ժողովրդի իսկական ներկայացուցիչներ են Թէ ոչ: Մենք ամենևին չենք պնդում և ասում, (մեր խօսքը հայ պատգամաւորների մասին է) չենք էլ ասել, որ պատգամաւորները ամբողջ հայ ժողովրդի ներկայացուցիչներ են: Ոչ, մենք շատ լաւ գիտենք, որ ընտրութիւնները եղել են անկատար, որ մասնակցել է ընտրութիւններին ոչ ամբողջ ժողովուրդը, այլ գլխաւորապէս մի քանի քաղաքների և գաւառի ժողովուրդը. մենք շատ լաւ գիտենք, որ ժողովրդի իսկական ներկայացուցիչներ կարող էին համարվել միայն նրանք, որոնք կընտրվէին ուղղակի, հաւասար, գաղտնի և ընդհանուր քուէարկութեամբ: Բայց հարցը դրա մէջ չէ և դա նշանակութիւն չունի ներկայ դէպքում: Չենք կարծում, որ եթէ պատգամաւորները ընտրված լինէին չորս-աստիճանեան ֆօրմուլայով, բոլորովին ուրիշ բան կասէին և ուրիշ միջոցներ կառաջարկէին, քան ասացին և առաջարկեցին համագումարին մասնակցող պատգամաւորները:

Ինչ էր պէտք ասել հայ պատգամաւորներին: Պէտք էր որ նրանք ցոյց տային Թէ՝ 1) հայ-Թուրքական ընդհարումների ծագման և զարգացման գլխաւոր պատճառը վարչութեան և տեղական իշխանութիւնների զանցառութիւնը և յանցաւոր անգործութիւնն էր, 2) հաստատուն, անշեղ և անաչառ իշխանութեան հրամայողական կամքը կարող է իրական խաղաղութիւն հաստատել, 3) յանցաւորները պէտք է պատժվեն և վնասները հատուցանվեն, 4) հայ ժողովուրդը ոչ մի տեղ նախայարձակ չէ եղել, ագրեսիւ դիրք չէ բռնել, այլ ստիպված է եղել դիմել զէնքի՝ ինքնապաշտպանութեան համար և կազմակերպութիւնների օգնութեան՝ կրած յարձակումները յետ մղելու համար, 5) կազմակերպութիւնները չեն եղել սկզբնապատճառ ընդհարումների, ոչ մի չար դիտաւորութիւն չեն ունեցել Ռուսաստանի և մուսուլման ժողովրդի դէմ, 6) կառավարութիւնը եթէ անկեղծօրէն կամենայ, կարող է զսպել ընդհարումները և վերջ տալ նրանց:

Եւ այս ամենը ասացին համարձակ, բայց կօրրէկտ կերպով, հայ պատգամաւորները, և ցոյց տուին այն մի քանի միջոցները, որոնց գործադրութիւնը, նրանց կարծիքով, կարող է օգնել խաղաղացման գործին:

Խորհրդակցական իրաւունքով գումարված մի ժողով ասաց այդ բոլորը և հեռացաւ: Չը պէտք է մոռանալ և հետևեալը առաջին անգամ Թուրք ժողովուրդը, ի դէմս իր պատգամաւորների, լսեց երկրի բարձր իշխանութեան բերանից, այն ևս Թագաւոր Կայսրի կողմից վճռական խօսք, Թէ անկարգութիւնները պէտք է վերջանան: Այդպիսի վճռական մի յայտարարութիւն, այն ևս Թագաւոր Կայսրի անունից արված, անշուշտ պէտք է սԹափեցուցիչ ազդեցութիւն գործէ բոլոր Թալանողների, կողոպտիչների վրա: Եթէ այսուհետև ևս անկարգութիւնները չը սաստվեն, չը զսպվեն, դա արդէն ապացոյց կը լինի, որ տեղական իշխանութիւնները չեն կամենում սաստել և զսպել:

Առանձին կերպով շեշտում է համագումարի հասարակական-քաղաքական նշանակութիւնը «Кавказъ» լրագիրը, ասելով որ համագումարը մեծ դեր պէտք է խաղայ երկրի, գլխաւորապէս հայերի և Թուրքերի ապագայ կուլտուրա-տնտեսական զարգացման և բարգաւաճման գործում:

«Առաջին անգամ—ասում է լրագիրը—ժողովրդի ներկայացուցիչները ազատօրէն ընտրված, կոչվեցին երկրի բարձր վարչութեան ներկայացուցիչների պաշտօնական նիստին ազատ, անկեղծ խօսքի իրաւունքով, ժողովրդական կարիքների և պահանջների մասին։ Առաջին անգամ ժողովրդական ներկայացուցիչները Փոխարքային դէմ առ դէմ կանգնած կարողացան, առանց քաշվելու ասել, ինչ որ կամենում էին։ Եւ այդպիսի մի դէպք, ի հարկէ, չէր կարող չը սևեռել իր վրա ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը, իբրև արտակարգ կարևորութիւն ունեցող մի դէպք»։

Այդ տեսակէտից համագումարը ոչ միայն տեղական, հայ-թուրքական, այլ և համակովկասեան ու համառուսական նշանակութիւն ունի։

Շահրիար

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մեծ-Սարով, (Ջիվանշիրի գաւառ)։ Սարովը ևս դատարկվեց, ամայի դարձաւ բարբարոս հարևանների խուլիգանական ձեռքերով. բազմամարդ, մեծ, շէն, հարուստ և փառահեղ հայաբնակ գիւղը իր վերին աստիճանի աշխատասէր և գործունեայ բնակիչներով ենթարկվեց Բաղա գիւղի և նրա թշուառ բնակիչների անողոք ճակատագրին։ Հեշտ է ասել «Սարովը ամայացաւ», բայց ով գոնէ միանգամ տեսել է այս փարթամ աւանը, ուր կեանքը եռում էր, որտեղ կեանքի նպաստող պայմանները դրել էին ժողովրդին նախանձելի դրութեան մէջ՝ լեռնային հայ գիւղացիների տեսակէտից,—նա, անշուշտ կը համաձայնի մեզ հետ, որ Սարովի կորուստը շատ զգալի հարուած է հայերի համար, մանաւանդ նոյն գաւառի հայերի։ Նա՝ իբրև դաշտային հացաշատ մասի կենտրոն՝ պահպանում էր սերտ յարաբերութիւն սարաբնակ հայ ազգաբնակութեան հետ և՝ իբրև մի մեծ ծառ բազմաթիւ ճիւղաւորութիւններով, պահպանում էր դաշտավայրում ցրված զանազան ուղղութեամբ և հեռաւորութեամբ հայ գիւղերը, որոնք առանց Սարովի երբեք չեն կարող իրանց գոյութիւնը շարունակել։ Հեռու գաւառներից հազարաւոր մշակներ, հնձողներ, մուրացկաններ, նոյն իսկ վերջերս իրան խայտառակող խնձորէկսկի թափառական աշուղներ, խումբ-խումբ դիմում էին դէպի Սարով և այնտեղ նիւթական օգնութիւն գտնում դրամով, հացահատիկներով և բրնձով։ Ո՞ր գանձակեցի կամ շուշեցի անհատը անհամբեր չէ սպասել շուկայում Սարովի համեղ բրնձի երևալուն, այդ քաղաքների ո՞ր պաշտօնեան կամ վաճառականը նախօրօք չէ պատուիրել ծանօթ սարովեցուն, որ վերջինս ժամանակին իրանց համար բրինձ ղրկէ։

Երբ սարովեցիների գաղթելու և գիւղի աւերման մասնվելու լուրը առայ, ես մի րոպէ անգամ հաւատ չէի ընծայում նրան, համարում էի այդ լուրը հնարովի և անհիմն. ես իրաւունք ունէի տարածվող լուրերին սկեպտիկ վերաբերվել հէնց այն պատճառով, որ նախ՝ մօտիկից ճանաչում էի տեղական հայերի անվեհեր հերոսութիւնը, անպարտելի քաջութիւնը, որոնցով նրանք անյողդողդ կը դիմադրէին անկոչ թշնամուն, կռւելով նրանց հետ մինչև վերջը. երկրորդը՝ գիւղը իր հարուստ նիստ ու կացով և փարթամ սնամէջներով միանգամայն անփոխարինելի էր։ Նա ինչպէս մի մեծութիւն ինքն էր կարող ուրիշներին իր մէջ տեղաւորել և պաշտպանել, իսկ ինքը գնալու և ուրիշ տեղ տեղաւորվելու հնարաւորութիւն չունէր։ Հեշտ չէր երեք հարիւրի չափ տուն, դեռ չը հաշված հարևան գիւղերից Սարով գաղթած հայերին, ընտանի կենդանիներով այս ձիւն ձմեռը գոնէ դուրս ընկնել բաղդ որոնելու, պաշտպանութիւն գտնելու քառասուն վերստի վրա հայ գիւղերում. բայց մեր անիծված ժամանակում այլ ևս անկարելի բան չէ մնացել, մանաւանդ եթէ այդ բանը վատ է և քայքայիչ. այդպէս էլ Սարովը շատ ուրիշ գիւղերի նման, երկար կռւելով և դիմադրելով անհաւասար հրոսակային խմբերի ոյժին, այն խմբերի, որոնց հրապուրել էր հայ գիւղի հարստութիւնը, ընկաւ, դատարկվեց, ամայացաւ...

Գանձակի գաւառապետի օգնական պ. Մ. Տէր-Աստուածատուրեանցի և դրագունների զօրամասի պահպանութեան տակ ժողովուրդը ստիպված եղաւ հեռանալ գիւղից և պատսպարվել աւելի անվտանգ տեղերում—Թալիշ, Ղարաչինար, Մաղաւուզ և այլ գիւղերում։ Դեռ ամիսներ առաջ կողոպտվել և դատարկվել էին գաւառի դաշտային մասի հայաբնակ փոքր գիւղերը—Սէյսուլան, Նարիմջա, Հասան-Ղայա (վերջինս Բաղա գիւղի հռչակաւոր «պաշտպան» Ալլահվեր բէկի կալուածքն է) Ղահրիլար, Ղարամանլու և Մարալեան-Սարով. վերջին երեք գիւղերը համեմատաբար քիչ վնասներ կրեցին—զրկվեցին անասուններից և տնից տեղից միայն, իսկ Մարալեան-Սարովի կրած խոշոր վնասները արդէն «Մշակի» ընթերցողներին յայտնի են. այդ գիւղը յանկարծակի եկաւ, բնակիչները ամենայն ինչ, բառիս բուն նշանակութեամբ, թողեցին ընչաքաղց խուժանի կամքին և իրանք մի քանի զոհեր տալով հազիւ կարողացան պաշտպանվել Մեծ-Սարովում՝ երկու վերստի վրա։

Կրկնում եմ, Սարովը անընկճելի էր ոչ թէ իր անառիկ դիրքով, այլ իր զաւակների քաջարի կարիճութեամբ, որոնք կարող էին դեռ երկար դիմադրել և իրանց հերոսային արիւնը թանկ գնով ծախել խուլիգաններին. այս հանգամանքը լաւ գիտէին պաշարողների տխրահռչակ բէկ առաջնորդները։ Խաւար մասսայի այդ խայտառակ պարագլուխները, տեսնելով հայերի կողմից դիմադրական անխոնջ եռանդ, դիմում են այլ անարգ միջոցի. քանի քանի անգամ նրանք քանդել են տալիս գիւղի միակ ջրանցքը, որը սկիզբ է առնում Թառթառ գետից, գիւղից երեսուն վերստ հեռաւորութիւնից. ուզում են անջուր թողնել գիւղացիներին և ծարաւ կոտորել նրանց։ Կօզակները փորձ են անում ջուրը կրկին բաց թողնել դէպի գիւղը, հետևանքը լինում է այն, որ նրանցից երկուսը սպանվում են խփերի յետևից, երրորդն էլ վիրաւորվում է... Առանց ջրի, պաշարված հայերի դրութիւնը գնալով վատթարանում է, առաւել կենդանիների դրութիւնը, որոնք զոմերից արձակվելուն պէս շտապում էին դէպի պաշարման գիծը ջուր որոնելու և հասկանալի է, ջինլուեցու և դարբնեցու բաժին դառնում։ Ընդհանրապէս ժամանակը, ինչպէս ամեն տեղ, այստեղ ևս մեծ կորուստ են ունեցել թուրքերը, որոնց մէջ հայերը ակամայից իրանց համար թշնամիներ են ստեղծել, իսկ դա ապագայի համար շատ վտանգաւոր է. Թուրքի վրիժառութեան ծարաւը ծայր չէ յայտնի։ Այսպէս խեղդող պայմանների ճնշող ազդեցութեան տակ սարովեցիները հեռանում են իրանց սիրելի օջախից, տնից, տեղից և նրանցից շատերը արտասուաթոր աչքերով հրաժեշտ են տալիս իրանց բնակարաններին, այլ ևս այնտեղ չը վերադառնալու մտքով։ Ընթերցող, գուցէ յիշում էք ռուսաց պատմութեան դասագրքերից թշուառ Մոսկվայի դրութիւնը Նապոլէոնի արշաւանքի ժամանակ, երբ Կուտուզովը հրամայում էր հրդեհել քաղաքը և հեռանալ. ճիշտ այդպէս են վարվում իրանց ծննդավայրի հետ և հերոս սարովեցիները, անօգնական, յուսահատ և խորտակված սրտով սարովեցիները...

Սարովը ընկած է անդրկովկասեան Եւլախ կայարանից դէպի արևմուտ քառասուն վերստի վրա և Թառթառ կայարանից, ուր կենտրոնացած են գաւառի պետական հաստատութիւնները—14 վերստ. Նա թաղված է խիտ ծառաստանի մէջ, որը հեռուից անտառի տեսարան է ներկայացնում այցելուին։ Տները շինված են քարից և աղիւսից՝ միմեանցից բաւական հեռու, այգիների մէջ, լայն և մաքուր փողոցներով. երկյարկանի տների թիւը շատ է, որոնց մէջ կային իւղաներկ պատերով, կամ պաստառով ծածկված և գեղեցկական վառարաններով։ Լաւ ճաշակով ապրելու, մաքուր հագնվելու համար սարովեցին ոչինչ չէ խնայում, այդ է պատճառը, որ սարովեցիները՝ չը նայած կլիմայական աննպաստ հանգամանքների, թագաւորող մալեարիայի, կայտառ են և առողջակազմ։ Սրանից տասներկու տարի առաջ Սարովը աւարտեց հոյակապ քարաշէն եկեղեցու շինութիւնը՝ ծախսելով նրա վրա մօտ քառասուն հազար րուբլի, երեք տարի առաջ վերջացաւ երկդասեան դպրոցի գեղեցիկ շէնքը, որը պահանջեց ժողովրդից ութ հազար րուբլի ծախս։ Թէ դպրոցի շինութիւնը իր հարուստ կահկարասիներով և թէ հարուստ գրադարանները—ուսուցչական, աշակերտական և ժողովրդական գրադարան-ընթերցարանով զոհ են գնացել վայրագ ամբոխի վանդալական անգութ կրքերին. ուսումնարանը՝ մի ուսուցչի աւելորդ կապրիզի շնորհիւ՝ գիւղից հեռու է շինված և թուրքերին ծառայել է որպէս դիրք յարձակվելու համար։

Գիւղումը կային բաւական թիւով վաճառականներ և արհեստաւորներ տեղացիներից և եկւորներ, երիտասարդութիւն, մի զարգացած երիտասարդ քահանայ, որը աւարտել է Ներսիսեան դպրոցի դասընթացը և որը մի աղեկտուր յօդուածով «Մշակի» մէջ գուժեց ընթերցողներին գիւղի վրա գալիք վտանգի մասին։ Երիտասարդութիւնը ստանում էր տասի չափ պարբերական հայ և ռուս թերթեր։ Հարևան թրքաբնակ գիւղերը գործով գնացած ատրճանաւորները, յարմարութիւն չը գտնելով թուրքերի մօտ, յաճախ իջևանում էին հիւրասէր և առատաձեռն Սարովում, որը շատերի կարծիքով պէտք է վերածվէր ապագայ գաւառական քաղաքի։ Սարովը այս դիրքը ձեռք էր բերել միայն և միայն ժողովրդի անխոնջ աշխատասիրութեամբ, անօրինակ գործունէութեամբ. Նա մի հողազուրկ գիւղ էր կալուածական հողի վրա, շատ աղքատ հողաբաժիններով. այս պակասութիւնը ջանասէր գիւղացիները լրացնում էին, վերցնելով իրանց համար ծանր պայմաններով հարևան կալուածատէրերի բերրի, բայց շնորհիւ մահմեդական ժողովրդի անհոգութեան, անմշակ մնացած հողերը, այն կալուածատէր բէկերի, որոնք հայ-թուրքական կոտորածների ժամանակ հայերի վերաբերեալ կատարեցին Կրիլովի խոզի դերը, փորելով այն ծառերի արմատները, որոնցից սնունդ են ստանում։

Սարովեցիները Ջիվանշիրի դաշտավայրում ծաղկեցրել էին բամբակագործութիւնը, շերամապահութիւնը, ցանում էին չափերով որիզ (չալթուկ), հացահատիկներ, նրանց ցանքսերը տարածվում էին մինչև երկաթուղու գիծը, Եւլախի և Մինգեչաուրի կայարանների շրջանում, որը մոծակների, թունաւոր միջատների և սողունների հայրենիքն է, որի կլիմայական անխորժ պայմանները թուրքերի համար անտանելի են, իսկ հայերի համար տանելի։ Թառթառի յորդառատ ջրանցքները նրանց համար անսպառ ջուր էին մատակարարում և հնարաւորութիւն տալիս պարապել հացաբոյսերի, որիզի, բամբակի կուլտուրայով։ Սարովում կար բամբակ մաքրելու եւրոպական շոգեմեքենայ, բրինձ խնդլելու և չորացնելու շինութիւն, որոնք պատկանում էին մասնաւոր անձանց—պարականցի Թումանեանցներին և շուշեցի Մելիք-Փաշայեանին։ Դրա ապշեցուցիչ հակապատկերն են ներկայացնում հարևան Ղարբանդ և Ջինլու թուրք կիսավայրենի ցեղերը, ցրված անհագին տարածութեան վրա, անհաստատաբնակ, աւազակաբարոյ, կուլտուրայի ամենատարրական կանոնները ըմբռնելու ընդունակութիւնից զուրկ. ոչ մզկիթներ ունեն, ոչ դպրոցներ, ձմեռը ապրում են խոր-խոր գետնափորներում, իսկ մնացած ժամանակ—վրաններում, ամառը Նոր-Բայազէտի գաւառում։ Սարովի վրա յարձակվել են Ջինլուն, Ղարբանդը և ուրիշ գիւղեր։ Վերջացնում եմ... Ես, որ 12 երկար ու ձիգ տարիների ընթացքում վարել եմ Սարովում ժողովրդական ուսուցչի համեստ պաշտօնը, յայտնում եմ սարովեցիներին իմ խորին վիշտը և ցաւակցութիւնը...

Նիկ. Գրիգորեանց

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Պետական Դումայի ընտրութիւնների առիթով Կովկասում։ Կովկասեան երկրի այն գաւառներում, շրջաններում և բաժանմունքներում, որտեղ չը կան գաւառական ազնուականութեան պարագլուխներ, Փոխարքան յանձնարարել է հրաւիրելու նահանգական և գաւառական, Պետական Դումայի ընտրութիւնների համար կազմված, ընտրողական մասնաժողովներում մասնակցելու հետևեալ կալուածատէրերին.

Թիֆլիսի նահանգում. Ախալցխայի գաւառական մասնաժողովի համար՝ Իօսիֆ Օրբելիանիին, Ախալքալաքի համար՝ պաշտօնաթող գեներալ-մայոր Դմիտրի Մուսխելովին։

Բագուի նահանգում. Ղուբայի գաւառի համար՝ Ահարոն Ղասաբովին, Լենքորանի՝ Միր-Ասկեր խան Թալիշխինսկուն, Գեօկչայի՝ Սալամ բէկ Արզուլախման Սուլէյմանովին, Շամախու համար՝ Շահբազ բէկ Շիխալիբէկովին։

Դաղստանի վիճակի մէջ. Թեմիր-խան-Շուրայի գաւառական մասնաժողովի համար՝ Համզատ բէկ Խասփոլաթովին, Դերբենդի՝ Նուրեդին բէկ Տաբասարանսկուն, Կիւրինի՝ Համզաթ բէկ Իւսուֆխանովին։

Գանձակի նահանգում. Գանձակի նահանգական մասնաժողովի անդամ՝ Համիդ-բէկ Զուլգադարովին, գաւառական մասնաժողովի անդամներ. Գանձակի համար՝ Յովսէփ Բէգլարեանին, Ղազախի՝ Նադիր-բէկ Դուղքասամանսկուն, Նուխու՝ Շիրին-բէկ Ամիրջանովին, Արէշի՝ Սուլթան-բէկ Սուլթանովին, Ջիվանշիրի՝ Իսմայիլ-բէկ Թալիբէկովին, Շուշու՝ Ջավադ-բէկ Սաֆար-Ալիբէկովին, Զանգեզուրի՝ Աբդուլ-Սամիդ բէկ Ջիվանշիրին, Կարեագինսկի՝ Հաշիմ-բէկ Վեզիրովին։

Երևանեան նահանգում. Նահանգական մասնաժողովի համար՝ Իսահակ Մելիք-Աղամալեանին. գաւառականի համար՝ Էջմիածնի՝ Վասիլ Եղիազարեանին, Սուրմալուի՝ Փանահ-խան Մակինսկուն, Շարուր-Դարալագեազի՝ Ալիմ Շանգիբէյին, Նախիջևանի՝ Բահրամ-խան Նախիջևանսկուն, Նոր-Բայազէտի՝ Հիւսէյին-բէկ Ղալիևին։ Ալեքսանդրապոլի՝ Իվան Կոստանեանին, Երևանեան՝ Աբաս-Ղուլի խան Էրիվանսկուն։

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԶՎԷԼՏԸ

Ռուզվելտին դիմելը՝ հայոց հարցի խաղաղ լուծման համար հետզհետէ մեծ ծաւալ է ստանում և արտասահմանեան հայ գաղութները ոյժ և աջակցութիւն են տալիս այդ դիմումներին։ Այսօր առաջ ենք բերում «Իրաւունք» և «Pro Armenia» լրագիրներից քաղած հետևեալ դիմումները.

1) Տօլրիչի ազգայինք փոխանակ հեռագրի, որոշած են հանրագրութեամբ մը դիմել Մ. Ռուզվէլթի։ Ահա պատճէնը այդ հանրագրութեան,

Տէր Նախագահ
Ամերիկեան Մ. Նահանգաց Մեծ Հանրապետութեան.

Տօլրիչի եւ շրջակայ գիւղօրէից հազարէ աւելի հայերս, որոնց մեծամասնութիւնը թըրքահայաստանի բոլոր գաւառներէն տարագրուածներ են, ներկայ հանրագրութեամբ կը դիմենք Ձեր աշխարհահռչակ արդարասիրութեան, խնդրելով որ բարեհաճիք սատարել քաղաքակիրթ աշխարհի առջև պաշտպանութիւնը ցեղի մը որ Արևելքի մէջ քաղաքակրթութեան և լուսաւորութեան ռահվիրան ըլլալու բարեմասնութիւններով օժտուած ըլլալով հանդերձ, ենթարկուած է անլուր հալածանքի թուրք կառավարութեան կողմէ, որ 300,000 հայեր խողխողել տալէ յետոյ, այսօր ալ կեղեքմանց այլազան եղանակներով կը ջանայ բոլորովին բնաջնջել ամբողջ ժողովուրդ մը։

Տէր Նախագահ, բնութեան տակ հեծող փոքր ժողովուրդներու ազատման համար Ձեր մարդասիրական զգացումները և վսեմ տրամադրութիւնները հաստատ յոյս կը ներշնչեն մեզ, ինչպէս նաև քաղաքակիրթ աշխարհին թէ ի գործ պիտի դնէք ձեր ջանքերը պաշտպանելու համար մեր ազգին մարդկային տարրական իրաւունքները, որոնք քանիցս միջազգային դաշնագիրներով երաշխաւորուած բայց ցարդ անգործադրելի մնացած են, գոգցես աւելի դառնացնելու համար մեր արդէն դառն կացութիւնը։

Արդ, Տէր Նախագահ, Տօլրիչի և շրջակայքի հասարակութիւնը համագումար ժողովով մը միաձայնութեամբ որոշեց թախանձագին խնդրել Ձեզնէ որ մեր ազգային դատին՝ որ միանգամայն արդարութեան ու քաղաքակրթութեան դատն է, գործնականապէս լուծելու նախաձեռնութիւնը ստանձնէք, որով չորս միլիոն հայերս յաւիտենապէս Ձեզ երախտապարտ պիտի թողուք, և մարդկութեան ու քրիստոնէութեան որորանն եղող մեր հայրենիքը ներկայ դժոխային կացութենէն փրկած և զարգացման ու քաղաքակրթութեան ճամբուն մէջ նետուած պիտի ըլլայ։

2) Աղեքսանդրիոյ միթինկը

Աղեքսանդրիոյ ազգայինք միթինկ մը գումարելով տեղւոյն ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյն մէջ փետր. 25-ին, հետևեալ հեռագիրը ուղղած են Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահ Մ. Ռուզվէլթին։

Աղեքսանդրիոյ Հայերը ի միթինկ գումարուած, միաձայնութեամբ կորոշեն խառնել իրանց ձայնը եւրոպացի հայասէրներու ձայնին խնդրելու համար ձեր ազդու միջամտութիւնը, Թուրքիոյ վատթար վարչութեան տակ հեծող Հայերուն ահելի վիճակին բարւոքման համար։

Պաշտօն յանձնուած է նաև Տ. Տ. Լևոն Մըկրտչեանի, Տօք. Ժամկոչեանի և Լևոն Լարենցի, որպէս զի ընկերակցութեամբ մէկ վարդապետի, պատգամաւորութիւն մը կազմելով, ներկայանան Աղեքսանդրիոյ ամերիկեան հիւպատոսարանը և Մ. Ռուզվէլթի ուղղեալ հեռագրին պատճէնը հաղորդեն, մի և նոյն ժամանակ եւրոպական թերթերուն ալ տեղեկագրեն։

3) Պուրկազի միթինկը

Պուրկազէն մեզ հասած թղթակցութենէ մը կը տեղեկանանք թէ կիրակի օր տեղւոյն հայ գաղթականութիւնը միթինկ մը գումարած և կարճ հեռագիր մը ուղղած է Մ. Ռուզվէլթին։ Այս հեռագրին ծախքին համար պնակ մը պտըտցնելով 175 ֆր. հաւաքած են։

4) Ժընևի հայ գաղութը

Այդ գաղութը, ինչպէս հաղորդում է «Pro Armenia», թերթը ուղարկել է նախագահ Ռուզվէլտին հետևեալ հեռագիրը.

«Ժընևում բնակվող հայ ուսանողները, ինչպէս և հայ գաղութը, գումարվելով ի մի միտինգ փետրվարի 4/17-ին, եւրոպական հայասէրների արած դիմումի առիթով, արտայայտում են իրանց խորին համոզմունքը, որ Դուք, պաշտպան ճնշված ազգերի, չէք խնայի ոչ մի ջանք ներկայացնելու Հաագայի կօնֆերենցիային և պաշտպանելու հայկական հարցը, որ ճանաչված է միջազգային դաշնագրերով։

«Այդ դիմումը, արված յանուն քաղաքակըրթութեան և մարդկային իրաւունքների մեծ Հանրապետութեան պետին, յենվում է նաև այն փաստի վրա, որ Միացեալ-Նահանգները կէս դարից ի վեր բեղմնաւորում են իրանց քաղաքակրթիչ իդէաներով Հայաստանի հողը, որի հալածված և լքված ժողովուրդը այսօր կորստեան վտանգին է ենթարկված մի անօրակելի բարբարոսութեան հարուածների ներքոյ։

«Միայն մի իրական և ազդու միջազգային միջամտութիւն, պատրաստված ձեր անշահախնդիր հոգսերով կարող է վերջ դնել այդ սոսկալի վիճակին, ինչպէս և այն մահաբեր ռէժիմին, որի անկումը, արագացրած հայ ժողովրդի հերոսական և արիւնահեղ կռւով, կը լինի արդարութեան և քաղաքակրթութեան յաղթանակը Փոքր-Ասիայի խաւարներում»։

5) Բուխարէստի հայ գաղութը

Բուխարէստ քաղաքի (Ռումինիա) 500 հայ բնակիչները ուղղել են Ռուզվէլտ նախագահին հետևեալ հեռագիրը.

«Բուխարէստի հայ գաղութը ձեզ երախտապարտ է այն մարդասիրական զգացմունքների համար, որ դուք ցոյց էք տալիս հայ ժողովրդին և խնդրում է ձեզ ներկայացնել հայոց հարցը Հաագայի կօնֆերենցիային. այսպէս գործելով դուք կը փրկէք յուսահատութիւնից մի ամբողջ ազգ, դուք կաւելացնէք քաղաքակրթութեան պատմութեան ամենափառաւոր էջերից մինը»։

ՄԻ ՓՈՔՐ ԷԼ ՄՏԱԾԷՔ

II

Մենք մեր առաջին յօդուածը վերջացրինք հետևեալ խօսքերով.—«Հայ և թուրքին միմեանցից բաժանելը անկարելի է և ոչ միայն անկարելի, այլ և ոչ ցանկալի»։

Այժմ պարզենք, թէ ինչու այդ բաժանումը անցանկալի ենք գտնում։

Կովկասը բարեբեր և բնական հարստութիւններով օժտված մի երկիր է, որը կարօտ է շահագործող և մշակող ձեռքերի։ Կովկասում ապրող ժողովուրդների մէջ իր ընդունակութիւններով աչքի է ընկնում հայ տարրը։ Նա տալիս է կապիտալ, նա երևան է հանում ձեռնարկելու ընդունակութիւն, նա և արտադրում է աշխատող ձեռքեր։ Մի խօսքով, հայը իր ընդունակութիւններով, շահագործելու ձգտումներով և աշխատելու ու մշակելու բնածին կարողութիւնով իր վրա է վերցրել և տանում է տոկունութեամբ մի բարձր միսիա—երկրի մշակումը, երկրի կուլտուրան։

Այդպէս մենք տեսնում ենք Կովկասի վաճառականութեան մէջ հայ տարրի գերակշռութիւնը։ Արտահանութեան—այն է բամբակի, մետաքսի, օղիների և գինիների, բրդի ու մորթիների վաճառականութեան մէջ նոյնպէս հայի գերակշռութիւնը։ Նաւթային աշխարհում հայ պրոմիշլեանների թիւը ակնյայտնի է։ Հողերի մշակման գործում էլ աւելի առաջ գնացած կը տեսնենք հայ տարրը։ Ընդարձակ կալուածներ կան Աղդամի, Բօրչալուի, Դերբենդի կողմերում։ Հային կը գտնենք նաև Մուղանի և այլ դաշտերում։

Այս բոլորի հետ միաժամանակ կը տեսնենք Կովկասի արդիւնաբերական կենտրոններում—Բաթումի, Բագուի, Թիֆլիսի գործարաններում, Գէտաբէկի հանքերում հայ աշխատող դասի համախմբումներ։

Մի կողմից կապիտալի, ձեռնարկութեան և աշխատող ուժերի կարօտ հարուստ Կովկաս։ Միւս կողմից ձեռնարկող, տոկուն աշխատանքի սովոր հայ տարր։

Փաստերի այս անօրինակ զուգադիպութիւնների դիմաց այժմ տեսնենք ինչ են մտածում լուրջ գլուխները։

Հայ-թուրքական ընդհարումներին ընդ միշտ վերջ դնելու և երկարատև խաղաղութիւն ապահովելու համար առաջարկում են հային և թուրքին բաժանել միմեանցից, ստեղծել զուտ հայկական նահանգ, տերրիտօրիա, հեռացնել հայերին այն տեղերից, ուր նրանք փոքրամասնութիւն են կազմում և տեղական վըտանգի մէջ գտնվում։ Այլ խօսքով, հաւաքվել, կուչ գալ որքան կարելի է փոքր տարածութիւնների վրա, որպէս զի հեշտ լինի պաշտպանվելը—հետևապէս յետ քաշել հայ ձեռնարկողին, հայ աշխատող ձեռքերին նաւթային աշխարհից, Մուղանի, Աղդամի, Դերբենդի, Բօրչալուի դաշտերից, Գէտաբէկի պղնձի հանքերից, մի խօսքով այն բոլոր արդիւնաբերական տեղերից, որոնք ընկած են թուրքերի մէջ։

Յանուն ո՞ր բարոյական իրաւունքների, պարոններ, դուք փորձում էք զրկել մի հարուստ երկիր կապիտալից, ձեռնարկող ուժերից և աշխատող ձեռքերից։ Յանուն ո՞ր բարոյական իրաւունքների, պարոններ, դուք փորձում էք մի բազմամարդ ժողովուրդ զրկել արդիւնաբերական և արտահանական ասպարէզներից։ Ասացէք, պարոններ, ո՞ր բարոյական իրաւունքներով դուք փորձում էք կանգնեցնել մի կուլտուրական ընթացք. եթէ մի րոպէ ընդունենք նոյն իսկ, որ ձեզ յանձնեն այդ կուլտուրայի բաղդը, մենք հաւատացած ենք, որ բնական ընդունակութիւններն ու ձգտումները սահմաններ չեն ճանաչում և նրանք չեն կանգ առնի ոչ մի արգելքի առաջ։

Կամ, վերջապէս, ինչ իրաւունքով դուք Բագուի գործարաններում, Գետաբէկի հանքերում և Մուղանի ու Աղդամի դաշտերում աշխատող հազարաւոր հայ ձեռքերին կը ստիպէք վերադառնալ իրանց թողած վայրերը, որտեղ նրանք ապրուստի միջոց չունեն։ Փաստ է, որ հայ ժողովուրդը ապրում է մեծ մասամբ լեռնային մասերում—Ալէքսանդրապօլի, Նոր-Բայազէտի, Ապարանի, Դարաչիչագի, Դարալագեազի, Զանգեզուրի, Ղազախի և այլ գաւառամասերում, ուր կլիմայական և աշխարհագրական պայմանները հնարաւորութիւն չեն տալիս արագ կերպով աճող ազգաբնակութեան հայթայթել իր ապրուստը և այդ անհիւրընկալ վայրերից աշխատող ձեռքեր դիմում են արդիւնաբերական կենտրոնները աշխատանք և գործ գտնելու. ասացէք ո՞ր իրաւունքով աշխատանք որոնող այդ մասսային կը ստիպէք յետ դառնալ այնտեղ, որտեղից նա փախել է սովամահ չը լինելու համար։

Ի հարկէ, ոչ մի իրաւունքով։

Ընդհակառակը, ոչ միայն թէկուզ մանանխի տեղափոխութիւն չը պիտի անել, ոչ միայն մի գիւղ էլ չը պէտք է տեղահան անել, ոչ միայն չը պիտի սղմվել, կուչ գալ, այլ որքան հնար է պէտք է ասպարէզ բանալ, առաջ գնալ, ընդարձակվել, որովհետև այդ է պահանջում մեր ժողովրդի ընդունակութիւնը, ձեռնարկող ոգին, աճելու օրգանական կարողութիւնը։

Ահա մեր կարծիքը, մեր տեսակէտը։

Անշուշտ կասէք, ինչ շահ այդ բոլորից, երբ այդ աշխատող ժողովրդի տասնեակ, հարիւր տարիների աշխատանքի արդիւնքը, ընդունակութիւնների պտուղը այսօր գազան թուրքը մի օրվայ մէջ ոչնչացնում է, աւերակ դարձնում, սպանում, ջնջում է այդ աշխատող ձեռքը, երբ այլ ևս վստահ չէս թէ նոյն բանը չի կրկնվի վաղը աւելի մեծ չափերով։

Ահա սխալ կերպով դրած հարցը, որը և կուզէինք պարզել։

Ասել թէ գազան կտրած թուրքը խելքի եկող չէ և Կովկասը դառել է անդառնալի կեր-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի՞նչ են ցանկանում այն մարդիկ, որոնք պատկանում են սահմանադիր - ռամկավար կուսակցութեանը։

I

1905 թ. հոկտեմբեր 17-ի մանիֆեստով ռուս ժողովրդին խոստացված են պետական նոր կեանքի սկզբունքներ։

Առաջ ամեն բան կառավարում էին չինովնիկները և ոչ ոք չէր համարձակվում դատողութիւն տալ, թէ ինչպէս են նրանք կառավարում և թէ ինչ պիտի անել, որպէս զի ժողովուրդը լաւ ապրի։

Այդպիսի դատողութիւն տուողներին հալածում էին ոստիկանութիւնը և ժանդարմները իբրև չարագործների։

Այժմ մանիֆեստով բոլորին խոստացված է խօսքի ազատութիւն, գումարումների և միութիւնների ազատութիւն, և ամեն մարդ հիմա իրաւունք ունի դատողութիւններ տալ պետական կարգերի մասին, ժողովրդի կարիքների մասին և այն մասին, թէ ինչպէս պիտի այդ կարիքները հոգալ։

Բացի դրանից, մանիֆեստով խոստացված է ամբողջ ռուսական երկրից ընտրված պատգամաւորներ հաւաքել Պետական Դումայում, որպէս զի նրանք ամեն տեսակ օրէնքներ ու պետական կարգեր մշակեն։ Խոստացված է նոյնպէս, որ ոչ մի օրէնք չի հրատարակվի առանց Պետական Դումայում եղած ընտրովի պատգամաւորների համաձայնութեան։

Հարկաւոր է, ուրեմն, որ ամեն մարդ հիմա հոգ տանի, որ Պետական Դումայի համար ընտրվեն այնպիսի արժանաւոր մարդիկ, որոնք կարողանան ժողովրդի համար օգտակար օրէնքներ պաշտպանել, որոնք հասկանան ժողովրդի կարիքները։

II

Հարկաւոր է նոյնպէս առաջուց համաձայնութեան գալ, թէ արդեօք ի՞նչ օրէնքները ժողովրդին օգտակար կը լինեն և թէ ինչ է հարկաւոր, որպէս զի ամենքն էլ կարողանան հանգիստ, լաւ և ազատ ապրել։ Մարդկանց համար շատ դժուար կը լինի իրանց հայեացքներն ու իրանց իրաւունքները պաշտպանել, եթէ նրանք առանձին առանձին գործեն։ Այդ պատճառով էլ, որպէս զի հեշտ լինի պաշտպանել ու կեանքի մէջ մտցնել իրանց հայեացքներն ու ցանկութիւնները, մարդիկ ամեն երկրներում, ուր ժողովուրդը վաղուց արդէն մասնակցութիւն ունի պետական կեանքի մէջ, միանում են և միութիւններ ու ընկերութիւններ են կազմում, որ կոչվում են քաղաքական կուսակցութիւններ։

Մեզանում էլ ժամանակը հասել է, որ բոլոր մարդիկ, որոնք իրանց հայեացքներով միանում են խորհում, թէ ինչպիսի օրէնքները ու պետական կարգերը պիտի լաւ համարեն, միանան միմեանց հետ և մի քաղաքական կուսակցութիւն կազմեն։

Ստորև տպագրվում են քաղաքական կուսակցութիւններից մէկի, այն է՝ սահմանադրական-դեմօկրատական կուսակցութեան ամենագլխաւոր ցանկութիւնները։

Ի՞նչ են ցանկանում մարդիկ, որոնք պատկանում են սահման. դեմ. կուսակցութեանը։

III

Հող. 1) Մարդիկ, որոնք պատկանում են Ս. Դ. կուսակցութեանը, ցանկանում են, որ ամեն մարդ, ով իր սեփական աշխատանքով է մշակում հողը, լաւ հողաբաժիններ ստանայ, և որ ամեն մարդ, կարելի եղածին չափ, այնչափ հող ստանայ, որչափ որ նա կարող է իր ընտանիքով մշակել, առանց կարիք զգալու ուրիշից կապալով հող վերցնելու։

Ում հողը որ քիչ է, կամ բոլորովին հող չունի, նա պիտի հողաբաժին ստանայ պետական ուդելնի կամ վանքական հողերից, իսկ որտեղ այդպիսի հողեր չը կան, կամ նրանք անյարմար են, պէտք է այդպիսի տեղերում հողագործների համար հողաբաժիններ վերցնել ագնուականների, վաճառականների կամ այլ մասնաւոր կալուածատէրերի հողերից։ Պետութիւնը պէտք է մասնաւոր հողերից վերցրած հողաբաժինների գինը վճարէ, նրանց արդար գնահատութեան համաձայն։

2) Նրանք ցանկանում են, որ պետութիւնը հողագործներին օգնէ իրանց գիւղական տնտեսութիւնը բարելաւելու։ Պէտք է երկար ժամանակով փոխառութիւններ տրվեն ճահիճները ցամաքեցնելու, տնտեսութեան համար շէնքեր կառուցանելու և այլն պէտքերի համար։ Պէտք է օգնել հողաբաժինների համար երկրի ներքում տեղափոխվողներին, կամ հեռու տեղ գաղթողներին. անհրաժեշտ է գիւղատնտեսական ուսումնարաններ հիմնել և ուրիշ միջոցներ ձեռնարկել, որպէսզի գիւղական ժողովուրդը կարողանայ լաւ ապրել։

3) Նրանք ցանկանում են՝ ոչնչացնել այն վճարները, որոնք գիւղացիք տալիս են տրված հողաբաժինների համար։

IV

Դատարան. 4) Նրանք ցանկանում են, որ ամենքի համար օրէնքը և դատաստանը հաւասար և միատեսակ լինեն, այլ ոչ թէ այնպէս, ինչպէս հիմա, երբ գիւղացիների համար օրէնքներն ու դատարանները այլ տեսակի են, իսկ ագնուականների համար էլ այլ տեսակի։ Գիւղացիները շատ զրկանք ու անարդարութիւն կրեցին գիւղական դատարաններից ու զեմսկի նաչալնիկներից։ Այլ ևս պէտք չեն դրանք։ Թող գիւղական համայնքում բոլորի համար էլ, թէ ագնուականների և թէ գիւղացիների համար, մէկ ընտրովի հաշտարար դատաւոր լինի և թող նա միևնոյն օրէնքներով դատէ համայնքում բոլոր ապրողներին. և վաճառականներին, և գիւղացիներին, և մեշչաններին և ագնուականներին։ Նրանք ցանկանում են նոյնպէս, որ չինովնիկներն ու ոստիկանութիւնն էլ պատասխանատու լինեն դատարանի առաջ իրանց հակաօրինական գործողութիւնների համար, ինչպէս որ պատասխանատու են նոյն դատարանի առաջ և միւս բոլոր քաղաքացիները, և որ կարելի լինի դատարանին դանգատվել ամեն մի չինովնիկի վրա, նրա կատարած անօրինականութեան ու զեղծումների համար, առանց նրա իշխանութիւնից թոյլտւութիւն խնդրելու։ Թէ չէ հիմա ամեն մի չինովնիկ, ինչ օրինազանցութիւն էլ անի, կարող է անպատիժ մնալ, եթէ նրա իշխանութիւնը չը ցանկանայ նրան դատի ենթարկել։

5) Սահմ. Դեմ. կուսակցութեան պատկանող մարդիկ ցանկանում են, որ, ոչ ոք պատժի չենթարկվի առանց դատարանի վճռի։ Ոչ իսպրավնիկը, ոչ ստանօվօյը, ոչ ուրեադնիկը, ոչ ստարշինան և ոչ էլ ստարօստան իրաւունք չը պիտի ունենան պատժելու առանց դատարանի։ Եթէ նրանց թւում է, թէ մէկը պիտի պատժվի օրէնքը խանգարելու համար, թող արձանագրութիւն կազմեն և հաշտարար դատարանին յանձնեն, իսկ նա արդարութեամբ կորոշէ, թէ արդեօք հարկաւոր է պատժել, թէ ոչ։

V

Ընդհանուր իրաւունքներ. 6) Նրանք ցանկանում են, որ անհատի անձը և բնակարանը անձեռնմխելի լինեն։ Ոստիկանութեան մասնաւոր բնակարան մտնելը, նրա մէջ խուզարկութիւն կատարելը և մասնաւոր նամակներ բացելը պէտք է թոյլատրվեն այն դէպքերում միայն, որոնք որոշված են օրէնքով և այն էլ ոչ առանց դատարանի կարգադրութեան։

7) Նրանք ցանկանում են, որ ամեն մի մարդ, ով ոստիկանութեան կողմից ձերբակալված կը լինի քաղաքներում կամ այլ այնպիսի տեղերում, որտեղ դատարան կայ, դատաստանական իշխանութեան ձեռքը յանձնվի 24 ժամվայ ընթացքում, իսկ միւս տեղերում երեք օրվայ ընթացքում։ Եթէ այդ ժամանակամիջոցում ձերբակալվածը դատարանին չէ յանձնված, նա պիտի ազատ արձակվի ոստիկանութեան կողմից։ Եթէ մարդը ձերբակալված է եղել իզուր տեղը, առանց բաւականաչափ հիմունքների, նա իրաւունք պիտի ունենայ պետութիւնից իր կրած վնասները ստանալու։

8) Նրանք ցանկանում են, որ ամենքն էլ հաւասարապէս քաղաքացիական իրաւունքներ ունենան, որ մարդիկ չը բաժանվեն զանազան դասերի, ինչպէս են՝ ագնուականներ, մեշչաններ, գիւղացիներ, վաճառականներ, և որ այդպիսի անուններ էլ գոյութիւն չունենան, այլ բոլորն էլ անուանվեն ռուս քաղաքացիներ։ Թէ չէ հիմա բոլոր քաղաքացիները կարծես թէ ցանկապատերով են միմեանցից բաժանված. ագնուականները մի տեսակ իրաւունքներ ունեն, իսկ գիւղացիները մի այլ տեսակ։ Հիմա գիւղացիների վրա մի առանձին խնամակալութիւն է հաստատված և բոլորն էլ հսկում են նրանց վրա։ Մի քայլ չէ կարելի անել առանց թոյլտւութեան, կարծես թէ գիւղացիները փոքր երեխաներ լինեն։

VI

9) Սահմ. Դեմ. կուսակցութեան պատկանող մարդիկ ցանկանում են, որ խօսքի և մամուլի ազատութիւն լինի, որ ամեն մարդ կարողանայ ազատ կերպով խօսել և տպագրել ամեն բան, ինչ որ ինքը մտածում է, առանց որ և է թոյլտւութեան։ Անկարելի լինի խօսել ու տպագրել միայն այն, ինչ որ օրէնքով է արգելված։ Եթէ մէկը արգելված բան է տպագրել կամ խօսել, թող նա պատասխանատու լինի երդուեալ դատարանի առաջ։ Օրէնքները պիտի լաւ լինեն, որպէսզի նրանք չարգելեն ժողովրդի համար օգտակար բաներ խօսելու և տպագրելու։

10) Նրանք ցանկանում են ժողովների ազատութիւն, որպէսզի ամենքը թէ քաղաքներում և թէ գիւղերում կարողանան ազատ կերպով, առանց թոյլտւութեան հաւաքվել թէ փակ շէնքերի մէջ և թէ հրապարակների վրա և քննել իրանց գործերն ու այնպիսի գործեր, որոնք վերաբերում են ամբողջ ժողովրդին, ամբողջ պետութեանը։ Հէնց այդպէս էլ եղել է հնումը մեզանում, բայց յետոյ չինովնիկներն ու ոստիկանութիւնը արգելեցին ռուս ժողովրդին ժողովների ազատութիւնը։

11) Նրանք ցանկանում են միութիւնների ազատութիւն, որպէսզի ամենքը իրաւունք ունենան առանց թոյլտւութեան միմեանց հետ միանալ և միութիւններ կազմել։

12) Նրանք ցանկանում են գործադուլների ազատութիւն, որպէսզի բոլոր բանւորները, քաղաքային արհեստաւորները և գիւղական օրավարձով աշխատաւորները իրաւունք ունենան գործադուլներ անել և այդ ճանապարհով օրավարձի յաւելում ու իրանց վիճակի բարեկաւումն պահանջել։

13) Նրանք ցանկանում են կրօնի ազատութիւն, որպէսզի ուղղափառները, հին դաւանութեան պատկանողները, ունիատները, կաթոլիկները, մահմեդականները, հրեաները կարողանան առանց քաշվելու իրանց տաճարները շինել, աղօթել նրանց մէջ իրանց կանոնների համաձայն և բոլորն էլ միևնոյն իրաւունքները ունենան։

14) Նրանք ցանկանում են անցագրերի կատարեալ ոչնչացումը։ Թող ամեն մարդ ազատ կերպով ապրի, ուր որ ինքը կը ցանկանայ։ Ինչի՞ համար են այդ անցագրերը։ Աւազակներին ու ամեն կարգի չար մարդկանց անցագրերը չեն խանգարում. նրանք կեղծում են անցագրերը և կեղծ անցագրով շատ լաւ են ապրում, իսկ անցագրերի պատճառով նեղվողներն ու զրկանք կրողները միայն ազնիւ մարդիկն են։ Բոլորովին պէտք չեն անցագրերը։

VII

15) Սահմ. Դեմ. կուսակցութեան պատկանող մարդիկ ցանկանում են, որ օրէնքով որոշվի ամեն տեղ, ուր որ հնարաւոր է, և ամենից առաջ գործարաններում ու պաւոդներում, ութ ժամեայ աշխատանքի օր։ Թէ չէ հիմա բանւոր մարդը ստիպված է այնքան երկար աշխատել, որ ժամանակ չէ ունենում ոչ գիրք կարդալ և ոչ էլ իր դրութեան մասին մտածել։ Նա հազիւ է ժամանակ գտնում ճաշելու և քնելու համար։ Յոգնած ու աշխատանքից ջարդված մարդը ինչպէս կարող է կարդալու մասին մտածել, որպէս զի կարողանայ իր համար մի օգտակար բան սովորել։ Ահա թէ ինչու համար պիտի կրճատել աշխատանքի ժամանակը։

Աշխատանքի վրա հսկողութիւն. 16) Նրանք ցանկանում են, որ օրէնքով արգելվին գիշերվայ ու որոշված ժամանակից աւելի աշխատանքները, բացի նրանցից, որոնց ընդհապով մի գազանանոց, չենք ընդունում: Չենք ընդունում հետևապէս և այն, որ անդառնալի կերպով խզված են հայ-Թուրքական յարաբերութիւնները: Ոչ, այդպէս չէ:

Նախ՝ պէտք է մենք հաշտվենք այն մտքի հետ, որ Ռուսաստանը շուտ թէ ուշ պիտի ալէկոծվէր, փոթորկվէր և այդ փոթորիկը մեզ ևս բաժին պիտի ընկնէր. ինչպէս բաժին ընկաւ և հրէային, և վրացուն և նոյն իսկ ռուսին: Հրէայ ժողովուրդը մենք տեսանք, թէ որպիսի հալածանքի, հրդեհի ու կողոպուտի ենթարկվեց՝ որպիսի գազանային գործեր կատարվեցին Քիշինեվի, Գոմելի, Օդեսայի, Ռոստովի և բազմաթիւ քաղաքների հրէական թաղերում: Այժմ մենք ականատես ենք, թէ ինչպէս Թշուառ Վրաստանը և վրացի տանջված ժողովուրդը աւերվում, կործանվում են անխնայ կերպով: Մենք տեսանք, թէ ինչպէս Մոսկվայում, Կիևում և այլ քաղաքներում թնդանօթի էին կապում ամբողջ թաղեր, ռուս հասարակութեան ամենալաւ ինտելիգենտ, ուսանող, աշխատող տարրերին: Եւ, վերջապէս, մենք տեսանք, թէ ինչպէս Տոմսկում գեղարուեստի տաճարը բոցերի մատնվեց իր մէջ ապաստան գտած մի քանի հարիւր ինտելիգենտ ռուս քաղաքացիներով:

Ո՞վքեր են այդ բոլորը անում. միթէ՞ այնտեղ էլ Թուրքեր կային. ոչ, այնտեղ ռուսներ էին, ռուս ժողովրդի տականքը, իսկ առջևից գնում էր ադմինիստրացիան, իր սև հարիւրեակներով:

Ահա քաղաքական այդ փոթորիկից մի ուժեղ զանգուած գլորվեց ու ընդհարվեց մեզ:

Եւ մեզ բաժին ընկած փոթորիկը ահաւոր էր, ծանր, կործանարար, որովհետև այդ փոթորիկը շալակած գրոհ էր տալիս մեզ վրա մեր դրացին, մեր հարևանը, նոյնքան տանջված, կեղեքված, բայց յիմարացած, գազան կտրած, խելագարուած, որը չէր ըմբռնում, թէ որպիսի մի ամօթալի դեր, ամարդի պաշտօն վերցրել է իր վրա, որպիսի խաբեբայութեան զոհ էր գնացել և, անգիտակ իր արածներին՝ մի և նոյն ժամանակ յօշոտում, ծուատում էր ինքն իրան աւելի շատ, քան մեզ ուրիշը:

Ահա դրացիական այդ ուխտադրուժ վարմունքը և իր տգիտութեան ընդհանուր երկրի շահերը զոհ բերող Թուրքը Կովկասի փոթորիկը աւելի ահաւոր և երկարատև դարձրեց:

Այո, մեզ հայերիս բաժին ընկած փոթորիկը ահաւոր էր, նա խփեց, անցաւ, աւերակ դարձնելով ամբողջ գաւառներ ու շրջաններ, բայց այդ ահաւորութեան մէջ կար մի տարր, որը մխիթարում էր մեզ, այդ հայ ժողովրդի տոկունութիւնն էր, դիմադրական ուժը, որը մի անասելի թափով յետ էր մղում ռէակցիօն շարժումը՝ հաւասարաչափ հարուածներ հասցնելով դիմացինին, որով աւելի ևս ապահովում էր իր ապագայ խաղաղութիւնը, քան կարող էր անել այդ՝ նրանից առանձնանալով:

Մեզ հասած փոթորիկը, որպէս Ռուսաստանի վիթխարի ալէկոծման մի յորձանք, նոյնքան անխուսափելի էր, որքան նա մի և նոյն ժամանակ և անցողական է: Այս բանին մենք հաւատում ենք. հաւատում ենք և մեր գլխին ձգված փոթորիկի անցողական լինելուն: Ռուսաստանի շարժման մէջ արտայայտվեցին, չափվեցին բոլոր ոյժերը, ինչպէս առաջադէմ, այնպէս և յետադէմ, ինչպէս ծնող, այնպէս և մեռնող տարրերը: Յետադէմ և մեռնող տարրերը եկան և սպառեցին իրանց ոյժերը, իսկ առաջադէմ և նոր ծնող տարրերը եկան և ձեռք բերեցին նոր ոյժեր, որոնց և պատկանում է վաղվան օրը:

Ահա այդ նոյն վաղվան օրը և մերն է: Թուրք տարրի այն մասը, թէկուզ մեծ մասը, որը յարեց ռէակցիօն շարժման, որպէս մեռնող տարր սպառեց իր ոյժերը և նա վաղը չէ լինելու այլ ևս, իսկ այն մասը, որը մասամբ բոլորովին հեռու է այդ շարժումից և շուտ ըմբռնող շարժման բացասական կողմը ու շուտ զղջացող, նա վաղը կը քաւի իր ցեղակիցների մեղքը և հարթելով մի նոր ճանապարհ՝ ինքը կը մօտենայ մեզ, որպէս դրացի ժողովուրդ և մենք կապրենք նախկինի պէս, թերևս աւելի էլ հաշտ ու բարեկամ, որովհետև Ռուսաստանի նոր կեանքը բերելու է մեզ լաւ օրեր, կուշտ ու ազատ օրեր, իսկ մարդիկ, երբ և կուշտ են և ազատ, նրանք կռուելու, միմեանց կոտորելու չունեն ոչ առիթ և ոչ էլ կարիք:

Մենք հաւատում ենք այս բանին և հեռու չէ այն ժամը, երբ արիւնալի դէպքերը տեղի կը տան մտքերի աստիճանական խաղաղումին:

Երբ վառօդն ու գնդակը կը լռեն, երբ մենք կը մոռանանք անգամ հայ ու թուրքին բաժանելու մասին մտածել, իսկ ձեռնարկող ոգին, տոկուն աշխատանքը կը շարունակէ բանալ իրան համար նոր ասպարէզ, և կուլտուրան կանէ իր նուաճումները:

Ա.—Դօ

ՄՈՍԿՎԱՅԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԶԵՄՍՏՎՕՅԻ ԿՈՆՖԼԻԿՏԸ

Փետրվարի 22-ին Մոսկվայի նահանգական զեմստվօյի ժողովում տեղի ունեցաւ մի խոշոր միջադէպ, որը սպառնում էր տապալել Ռուսաստանի այդ միակ օրինակելի ու օգտակար հաստատութիւնը՝ Մոսկվայի զեմստվօն: Ռուսաստանի ազատագրական շարժման մէջ զեմստվօն, նամանաւանդ Մոսկվայինը, աչքի ընկնող դեր է խաղացել: Մոսկվայի ազատամտութիւնը ճնշելուց յետոյ, այնտեղ ռէակցիօն կուսակցութիւնը արագութեամբ սկսեց զօրեղանալ և այն աստիճանին հասաւ, որ իր ձեռքը առաւ հին մայրաքաղաքի՝ Մոսկվայի դուման և, խրախուսված կառավարութեան դաշինքից, մեկնեց իր թաթը դէպի զեմստվօն, այն միակ հաստատութիւնը, որը Ռուսաստանի ամենաականաւոր զեմստվօական ոյժերի ու հայրենիքի ամենաանշահախնդիր գործիչների ջանքերով, նոյն իսկ աննպաստ հանգամանքների մէջ, կարողանում է առաջադիմական խթան լինել Ռուսաստանի տնտեսական բարգաւաճման ու մտաւոր առաջադիմութեան գործին:

Ահա դա է պատճառը որ ամբողջ Ռուսաստանի հասարակական կարծիքը մեծ անհանգստութեամբ, վրդովմունքով սպասում էր թէ ինչ ելք կունենայ այդ կոնֆլիկտը:

Ներկայ քաղաքական պայքարը, մարդկային հասկացողութեան ու նրանց տնտեսութեան շնորհիւ երբեմն խոշոր ծայրահեղութիւնների էր հասնում, իսկ այդ շերտի վրա ստեղծված նոր կացութիւնը անհամբերութիւն ու կարճատեսութիւն ստեղծում ընդդիմադիր կուսակցութիւնների մէջ: Այդ անհամբերութիւնն էր միակ պատճառը, որ ծագեց ներկայ կոնֆլիկտը: Դա ռէակցիօներ բանակի լիդեր Ա. Ի. Գուչկովի ստեղծագործութիւնն էր, որով իր քաղաքական հակառակորդներին, որոնք Մոսկվայի նահանգական զեմստվօյի ամբողջ ոգին են կազմում ամբողջ տասը տարի շարունակ, նրա ղեկավար մարմինը՝ վարչութիւնը, ձախակողմեաններին հարուածելու փոխարէն, կարճատեսութեամբ ակամա փորձ զեմստվօյի հաստատութեան տակ և անդրի գայլերը առաջացրեց մինչև իսկ իր քաղաքական համախոհների մէջ: Փետրվարի 22-ի նիստում զեմստվօյի նահանգական ժողովը ներկայ եղող անդամների ձայների առաւելութեամբ ընդունեց ռէակցիօներների լիդեր Ա. Ի. Գուչկովի առաջարկութիւնը, որով պարսաւելի էր վարչութիւնը միջոցներ ձեռք առնել գործադուլների դէմ և քննութիւններ կատարել քաղաքական գործերի համար զեմստվօյի ծառայողների վերաբերեալ ու արգելելու էր վարչութեան բռնած դիրքը: Չը նայելով առաջադէմ կուսակցութեան բողոքներին, ծառայողների ու ժողովրդի շահերին ջերմ պաշտպանութեան ու բացատրութիւններին, որ այդ քայլերը անպատշաճ են զեմստվօյի համար, ժողովը համակերպվեց Գուչկովի հետ:

Այդպիսի անպատշաճ որոշումներ ընդունել վարչութիւնը չէր կարող, ուստի ամբողջ կազմով հրաժարական տուեց: Իսկ զեմստվօյի ծաղկեալ վիճակը դրվեց վտանգի տակ, մեծ մասը առաջացնելով ներկայում, իսկ փոթորիկներ խառնելով առաջիկայում: Դա չէր կարող խուսափել կոնֆլիկտի ներսու Գուչկովի հայեցքներից և նա շուտով ուղղեց իր սխալը:

Յանուն զեմստվօյին գործի, հասարակական կարծիքի ճնշման տակ և ժողովին բացակայ անդամների պահանջով, փետրվարի 28-ի արտակարգ նիստում հարց յարուցվեց կոնֆլիկտի մասին:

Ա. Ի. Գուչկովը, ժողովին բաւարարութիւն տալու համար, բացատրեց, որ նա մտադիր չէ եղել ոստիկանական ֆունկցիաներ յանձնել վարչութեանը, իսկ ծառայողների վերաբերմամբ նա ոչ թէ վարչական պատիժ է ի նկատի ունեցել, այլ դատաստանական և որ այդ հարցերի առիթով իր յայտնած կարծիքները չեն շօշափում ամենևին վարչութեան պատիւը ու չը պէտք ազդէ վարչութեան գործունէութեան վրա:

Այդ բացատրութիւնից գոհ մնացին թէ ժողովի անդամները և թէ վարչութիւնը, ուստի վերջինս ժողովի միաձայն խնդիրքի համաձայն յետ վերցրեց իր հրաժարականը: Նիստը վերջանալուց յետոյ, նոյն օրը, երեկոյեան ժողովի նախագահ իշխ. Պ. Ն. Տրուբեցկոյը Մոսկվայի նահանգապետին ուղարկեց զեմստվօյին ժողովի վերջին նիստի արձանագրութիւնից քաղուածքը, որ նահանգական զեմստվօյին վարչութեան նախագահ Ֆ. Ա. Գոլովինը և բոլոր անդամները, ժողովի խնդրանօք, համաձայնվեցին յետ վերցնել իրանց հրաժարականի մասին տուած խնդիրքները և շարունակել ծառայութիւնը զեմստվօյի մէջ: Մի և նոյն ժամանակ իշխ. Պ. Ն. Տրուբեցկոյը խնդրեց նահանգապետին հաղորդել ի գիտութիւն ներքին գործերի մինիստրութեան, որ վարչութեան նախագահ Ֆ. Ա. Գոլովինը ցանկանում է մնալ իր պաշտօնում:

Մարտի 1-ին, առաւօտը, նահանգապետը այդ մասին հեռագրել է ներքին գործերի մինիստրին, իսկ փետրվարի 28-ին նահանգական վարչութեան նախագահը և անդամները յայտարարութիւն են ներկայացրել Մոսկվայի նահանգապետին, խնդրելով անհետևանք թողնել իրանց հրաժարականի մասին տուած խնդիրքները:

Այդպէս վերջացաւ այդ փոթորկալից կոնֆլիկտը, ազատելով Մոսկվայի նահանգական զեմստվօն վերահաս վտանգից, իսկ վարչութիւնը դրանից միայն շահ ունեցաւ: Նա վճռողաբար հրաժարվեց ընդունել այն որոշումը, որը դէմ էր իր համոզմունքներին, իսկ նրա քաղաքական հակառակորդները, գլխաւորելով այդ միջադէպից ծագող չարիքները, ստիպված եղան յետ նահանջել: Սակայն յետ կը նահանջէ՞, արդեօք, Դուրնօվօն: Այնպիսի հայեցքով, որ ներկայացրել են Գոլովինի հրաժարականը, թոյլ է տալիս կարծելու, որ նոյնպիսի հայեցքով էլ կը դիտվի մինիստր Դուրնօվօյի կողմից, որը թէկուզ զեմստվօյի անկման գնով կուզենայ ազատվել Գոլովինից: Բայց եթէ մինիստրը մի այդպիսի քայլ անելու լինի, այն ժամանակ կոնֆլիկտը անխուսափելի է զեմստվային ժողովի և մինիստրութեան մէջ: Այդ դէպքում վարչութեան կողմը կը լինէ ամբողջ զեմստվային ժողովը, ի թիւս որոնց և նրանք, որոնք, 22-ի միջնադէպի և վարչութեան հրաժարականի հեղինակներն էին:

Ցանկալի է՞, արդեօք, կառավարութեան համար մի այդպիսի կոնֆլիկտ: Յամենայն դէպս նահանգական վարչութիւնը մի մեծ յաղթանակ տարաւ, որի բարոյական արժէքը անկարելի է նսեմացնել:

ՔՈՉԻ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

Ազգաբնակութեան դաշտային աշխատանքների անարգել կատարումը ապահովելու հարցի համար կազմված մասնաժողովի արձանագրութիւնը:

Մասնաժողովը, երևանեան նահանգապետ կոմս Վ. Ֆ. Տիզենհաուզենի նախագահութեամբ, բաղկացած Գանձակի նահանգապետ Ա. Ա. Կալաչեվից, կովկասեան անասնաբուժական մասի կառավարիչ Պ. Ի. Զօլոտարեվից, Ա. Ա. Քալանթարից, Ա. Մ-բ. Թոփչիբաշեվից, Վ. Մ. Մեհրաբեանից, Մ. Ս. Լազրեվից, Լ. Ի. Ղուլեանից, փոխ-գնդապետ Ա. Ի. Վեքիլովից, Զ. Բ. Սուլթանովից, Ի. Բ. Մելիք-Բէգլարեանից, Շ. Մ. Էմինովից, Ա. Ն. Տէր-Աւետիսեանից, Շ. Բ. Միրզայէվից և կալուածատէր Ա. Բ. Զիւլգադարօվից, քարտուղարութեամբ Կ. Մ. Տէր-Պետրոսեանցի, մարտի 4-ին քննելով ազգաբնակութեան աշխատանքների անարգել կատարումը ապահովելու խնդիրը, անհրաժեշտ համարեց իր կողմից առաջարկել հետևեալ միջոցները. 1) Այն տեղերում, որտեղ նկատվում են հարևան Թուրք և հայ ազգաբնակութեան մէջ սուր լարված յարաբերութիւններ, դաշտային աշխատանքների ամբողջ ժամանակամիջոցում նշանակել զօրամասեր կարգը՝ և խաղաղութիւնը պահպանելու համար: 2) Կազմել տեղական խառն մասնաժողովներ հարևան գիւղերի ընտրեալներից կամ թէ մի և նոյն գիւղերից, եթէ վերջիններիս ազգաբնակութիւնը խառն է, մանր մունր թիւրիմացութիւններ, որ և է ընդհարումների առաջն առնելու և այդպիսիները քննելու համար, եթէ որ ծագելու լինի, ըստ որում նրանց վճիռները պէտք է կատարուեն առանց ադմինիստրատիւ կարգով: 3) Մասսայական կամ ընդհանրապէս խոշոր ընդհարումների դէպքում նիւթական պատասխանատուութեան ենթարկել համայնքներին իրանց յանցաւոր անդամների և այլ գործողութիւնների համար, իսկ տուգանքի գումարի չափը որոշվում է գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ:

Քոչւորների համար պատրաստւող կանոնների ծրագիրը.

1) Քոչւորները դուրս են գալիս և դուրս են տանում իրանց անասունները ձմեռանոցներից դէպի սարերը՝ եայլաղները և ընդհակառակը, գաւառապետի նախագահութեամբ կազմված գաւառական մասնաժողովի սահմանած ժամանակամիջոցներում: 2) Քոչւորների և նրանց անասունների չուն կատարվում է, մի և նոյն մասնաժողովի վաղօրօք որոշած, արքունական ճանապարհներով (по трактамъ); 3) Քոչւորները ճանապարհին կարող են դադար առնել միայն այն տեղերում, որոնք նախապէս որոշված են մի և նոյն մասնաժողովի կողմից; 4) Ճանապարհին չէ թոյլատրվում մասնաժողովի որոշած ժամանակամիջոցից աւելի մնալ: 5) Իւրաքանչիւր գիւղի քոչւորների և նրանց անասունների ճանապարհվելը կատարվում է միժամանակ և կամ խոշոր խմբերով, որոնց կազմութիւնը որոշվում է գաւառական մասնաժողովը: 6) Քոչւորների իւրաքանչիւր մասին կամ խմբին պէտք է ուղեկցէ գիւղական վարչութեան մի պաշտօնեայ, քոչւոր խմբի ընտրեալների հետ միասին, որոնց հաստատում է գաւառապետը: Մի և նոյն պաշտօնեաները միշտ պէտք է գտնվեն համապատասխան քոչատեղերում: 7) Անասնատէրերը պարտաւորվում են քոչող անասունների անմիջական հսկողութիւնը յանձնել չափահասներին: 8) Ցանքսերը արածացնելու կամ ուրիշ վնասներ պատճառելու համար, եթէ յօժարակամ համաձայնութիւն չէ կայանում շահագրգռված կողմերի մէջ, քոչւորները վարձատրութիւն վճարում են այն չափով, ինչ չափով որ որոշում է մերձաւոր ոստիկանական պաշտօնեայի նախագահութեամբ կայացած մասնաժողովը: 9) Այս կանոնները խախտելու համար յանցաւորները ենթարկվում են ադմինիստրատիւ պատժի, տեղական նահանգապետի կարգադրութեամբ, 3 ամսվայ բանտարկութեան կամ 500 րուբլի դրամական տուգանքի: Հովիւների և վարձկան մարդկանց համար պատասխանատու են անասնատէրերը:

Փոխարքայի կարգադրութեամբ քոչւորների հարցի քննութեան համար կազմված մասնաժողովի արձանագրութիւնը.

Մասնաժողովը, երևանեան նահանգապետ կոմս Վ. Ֆ. Տիզենհաուզենի նախագահութեամբ, բաղկացած հետևեալ անդամներից՝ Թիֆլիսի նահանգապետ Բար. Պ. Ա. Ռաուշ-Ֆոն-Տրաուբենբերգից, Գանձակի նահանգապետ Ա. Ա. Կալաչևից, կովկասեան անասնաբուժական մասի կառավարիչ Պ. Ի. Զօլոտարևից, Ա. Ա. Քալանթարից, Վ. Մ. Մեհրաբեանից, Ա. Մ-բ Թոփչիբաշեվից, փոխ-գնդ. Վեքիլովից, Ի. Վ. Մելիք-Բէգլարեանից, Մ. Ս. Լազարևից, Լ. Ի. Ղուլեանից, Մ. Բ. Էմինովից, Զ. Բ. Սուլթանովից, Մ. Բ. Շահմալիեվից, Ա. Ն. Տէր-Աւետիսեանից, Շ. Բ. Միրզաեվից, անդամ-քարտուղար Կ. Մ. Տէր-Պետրոսեանցից, փետրվարի 28-ին քննեց Թիֆլիսի նահանգապետի մարտի 2 և 4-ին կազմած գիւղերի քոչւորների եղանակի և քոչատեղերում մնալու կարգերի մասին պարտադիր կանոնների ծրագիրը և, աչքի առաջ ունենալով, որ 1905 թւին տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների պատճառով, հայերի և թուրքերի յարաբերութիւնները չափազանց լարված են և այդ ընդհարումները ամենաչնչին պատճառներից անգամ վերսկսվելու վտանգը դեռ բոլորովին չէ անցել, փոփոխութեան ենթարկեց վերոյիշեալ պարտադիր կանոնների ծրագիրը և, կազմելով ներքևում յիշված նոր ծրագիրը, անհրաժեշտ համարեց, հայերի ու թուրքերի մէջ ընդհարման առիթները հեռացնելու հնարաւորութիւնը ի նկատի ունենալով, այս տարի ձեռք առնել հետևեալ միջոցները, մասնաժողովի մշակած պարտադիր կանոնների հրատարակութիւնից անկախ: 1) Ամեն մի գաւառում կազմվում է գաւառական քոչային գործի մասնաժողով գաւառապետի նախագահութեամբ, որի անդամները բաղկացած են՝ հաշտարար միջնորդից, անասնաբոյժից և շահագրգռված կողմերի ընտրեալներից, հաւասար թւով թէ հայերից և թէ թուրքերից: Հարկաւոր դէպքում ամեն մի գաւառում կազմվում են երկու կամ մի քանի այդպիսի մասնաժողովներ գաւառապետի օգնականի կամ հաշտարար միջնորդի նախագահութեամբ: Այդ մասնաժողովին է վերապահվում որոշել. քոչւորների ճանապարհվելու ժամանակը, ճանապարհին նրանց մնալու ժամանակամիջոցը, անցնելու ուղիները, չուադադարի տեղերը, վերջնական վճիռներ տալը այն թիւրիմացութիւնների և վէճերի վերաբերեալ, որոնք ծագում են նրանց տակեց և քոչւոր ազգաբնակութեան մէջ, ցանքսերը արածացնելու և ուրիշ վնասների պատճառով, և չուադադարներում անասունները արածացնելու վարձատրութիւնների համար: 2) Քոչատեղերում (եայլաղներում) թիւրիմացութիւնների և վէճերի առաջն առնելու ու նրանց քննելու համար կազմվում են մասնաժողովներ քոչերին վերահսկող գիւղական ստարշինաների կամ նրա համապատասխան օգնականի նախագահութեամբ և ուրիշ 2—3 հոգուց քոչւորների ընտրութեամբ: 3) Այն վէճերը և թիւրիմացութիւնները, որոնք ծագում են ճանապարհին, քոչւորների և նրանց անասունների չուի ժամանակ, ցանքսերը արածացնելու, զրկութիւնների, ուրիշ վնասների և ժամանակաւոր արօտատեղերի համար վարձատրելու պատճառներով, շուտափոյթ կերպով լուծելու համար կազմվում է մի մասնաժողով՝ մերձաւոր ոստիկանական պաշտօնեայի նախագահութեամբ (պրիստաւի, քոչատեղերի կառավարչի և այլն), շահագրգռված կողմերից հաւասար չափով ընտրված անդամներից: Այդպիսի մասնաժողովների վճիռները անյապաղ կատարումն են ստանում և կողմերից յետոյ միայն կարելի է վճռաբեկ բողոք ներկայացնել դրա մասին գաւառական մասնաժողովին: Այդ միևնոյն մասնաժողովների վրա է պարտականութիւն դրվում ընդհարումների առաջն առնելու համար միջոցներ գործադրել իրանց տեղերում: 4) Ճանապարհների թիւը, որտեղից սովորաբար կատարվում են քոչւորների չուերը, կարելի եղածին չափ կրճատել, մանաւանդ այն տեղերում, որտեղ ընդհարումներ են եղել: 5) Կրճատել նոյնպէս քոչւորների և նրանց անասունների ճանապարհին մնալու ժամանակամիջոցը: 6) Քոչւորներին բնակեցնել քոչատեղերում (եայլաղներում), որքան կարելի է, մի և նոյն գիւղական համայնքին պատկանող մեծ խմբերով: 7) Քոչատեղերում պարտադիր է գիւղական պաշտօնեաների ներկայութիւնը (գիւղական տանուտէրի կամ նրա օգնականի): 8) Երկրագործութեան մինիստրութեան և պետական կալուածքների պաշտօնեաները պարտաւոր են անյապաղ գնալ քոչատեղերը՝ արօտատեղերի սահմանների պատճառով ծագած վէճերը վճռելու համար: 9) Աչքի առաջ ունենալով այն, որ ներկայումս, ինչպէս նկատվում է, արօտատեղերից մի քանիսները չեն շահագործվում այն անձանց կողմից, որոնց յանձնված է, ցանկալի է, որ արօտատեղերից օգտվելու կարգը վերաքննվի, որպէս զի արօտատեղերի յանձնումը առիթ չը դառնայ արօտատեղերի շահագործման համար մասնաւոր անհատների կողմից: Մի և նոյն ժամանակ ցանկալի է, որ հնարաւորութեան չափ վերջ դրվի ցրուածութեան (черезполосность), նոյնպէս և անասունները զանազան տեղեր տանելուն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամսիս 15-ին Թիֆլիսի դատաստանական պալատում քննվելու է Վլադիմիր Խոսագովեանի, Գասպար Քոչարեանի, Շիօ Պավլիաշվիլու, Դաւիթ Քաջաուրու, Աղէքսանդր Ցէկլիպուրաշվիլու և Պետր Բասարիչէվի գործը, որոնք մեղադրվում են այն բանի մէջ, որ 1905 թւին մտան սօցիալ-յեղափոխական կազմակերպութեան ռազմիկ խմբի մէջ, որը նպատակ է դրել տապալել Ռուսաստանի ներկայ հասարակական կարգը, և ծանր ոճիրներ կատարելու նպատակով ձեռք բերեցին պայթուցիկ ռազմամթերքներ, իսկ առաջին հինգ հոգին միևնոյն ժամանակ և այն բանում, որ որոշեցին կովկասեան ոստիկանութեան գլխաւոր կառավարիչ գեներալ Շիրինկինին սպանել պայթուցիկ նիւթերով և այդ նպատակով էլ երկու ռումբ պատրաստեցին:

—

Գանձակից «Кавказъ»-ին գրում են հետևեալը. «1906 թւի փետրվարի 20-ին Անդրկովկասեան երկաթուղիների կապալառու Յակովլեւեան գործակատար Աղէքսանդր Գալուստեանը մեկնել է Թիֆլիսից փող բաժանելու Թիֆլիս-Բագու տանող գծի բանւորներին: Միևնոյն օրը, 20-ին, նա եկել է Գանձակ կայարանը և բաժանել է իր մօտ եղած փողերի մի մասը բանւորներին, որը հաստատվում է Գանձակ կայարանի բանւորների գրքոյկներից: Գալուստեանին վերջին անգամ տեսել են Գանձակ կայարանում փետրվարի 21-ին առաւօտեան, և նրանից յետոյ, թէ որտեղ է նա գնացել կամ ինչ է պատահել նրա հետ, ոչ ոքի յայտնի չէ»:

—

Գանձակի նահանգի Ղազախ քաղաքից «Совр.» թերթը ստացել է Ղազախի թուրքերի խմբի գնդապետ Էլիզեկոյ հրատարակած «Ղազախի գաւառի բնակիչների համար պարտադիր որոշումների» մի օրինակ: Այդ որոշումների 7-րդ յօդուածը ասում է. «բոլոր զէնք կրողները կը համարվեն աւազակներ և գնդակահար կը լինեն հէնց պատահած տեղում»:

—

Ամսիս 8-ին, Օլգինսկի փողոցի վրա Թատօ Գարայեվի տանը, որը կապալով է վերցրել «Բերլին» հիւրանոցի տէր Խունդաձէն, վերանորոգման ժամանակ Խունդաձէի երկու գիմնազիստ որդիները և մի ուրիշը գտնում են երկու պատրաստի ռումբ: Խունդաձէն իմանալով դրա մասին, երկիւղից ռումբերը վերցնում, թաքցնում է արտաքնոցում: Ոստիկանութիւնը տեղեկանում է և երեկոյեան ժամի 8-ին զօրքով ու կօզակներով շրջապատում է տունը, վերցնում ռումբերը և Խունդաձէին ու երեխաներին տանում կօմենդանտի վարչութիւնը, որտեղ հարցաքննութիւնից յետոյ արձակում են երեխաներին, իսկ իրան Խունդաձէին տանում բանտը:

—

Ինչպէս յիշում են մեր ընթերցողները, Պետերբուրգի մահմեդական համաժողովի ընթացքում, Բագուից, անծանօթ անձերից, ներքին գործերի մինիստրին մի հեռագիր էր ուղղվել, որ իբրև թէ համաժողովի պատգամաւորները քաղաքական դաւադիրներ են: Եւ իբրև թէ անանուն այդ հեռագիրը պատճառ էր դարձել համաժողովի արգելման: «Իրշադ»-ը՝ Պետերբուրգի «Ուլֆէթ» թերթից քաղելով, այժմ հաղորդում է, որ մի այդպիսի մատնութեան հեռագիր գնացել է և Օրենբուրգից. հեղինակն է եղել, ինչպէս պնդում է «Ուլֆէթ»-ը, հէնց նոյն քաղաքի մուֆտի Սուլթանովը: Թերթը բացատրում է այդ մատնութիւնը այն մտքով, որ համաժողովի քննութեան կէտերից մէկը լինելով հոգևորականների՝ ժողովրդի կողմից ընտրվելը և այնուհետև կառավարութեան հաստատվելը, Սուլթանովը իբրև դասեան մուֆտի, չէր կարող այդ բանը տանել: «Իրշադ»-ի յօդուածը վերջանում է հեգնական խորհրդով Սուլթանովին՝ ռոճիկը տասնապատկելու համար օգնութեան փութալ Զըհոմանսկուն, որ այս րօպէին ձգտում է կէրկիզներին բաժանել մահմեդականներից: Եւ յորդորում է թողնել իր պաշտօնը, որովհետև մահմեդականներին փոս փորողների՞ց ծառը ներսից ուտող որդեր շատ կան»...

—

Մեր հայրենակիցներ երգիչ Ամիրջանի և ջութակահար Նալբանդեանի մասին «Страна» լրագրում կարդում ենք հետևեալ տողերը: Պ. Ամիրջանը իշխում է իր ձայնին և կարողանում է հմտութեամբ օգտվել նրանով: Նա երգում է զգացված և տեմպերամենտով: Մեծ աջողութեամբ ջութակահար Նալբանդեանը նուագեց մի քանի պիէսաներ, որոնցից աչքի էր ընկնում իր սեպհական «Caprice orientale» որը կրում է արևելեան բնաւորութեան բոլոր հարազատութիւնը:

տևելը, ըստ իրանց արդիւնագործական բնաւորութեան, անկարելի է և կամ որոնք հասարակական պէտքականութիւն են ներկայացնում: Նրանք ցանկանում են, որ գաւօդներում, գործարաններում և արհեստանոցներում լաւ շինութիւններ լինեն, որոնց մէջ վնասակար չը լինի աշխատելը: Նրանք ցանկանում են, որ յատուկ միջոցներով ապահովված լինի կանանց և երեխաների աշխատանքը արդիւնագործական այն ճիւղերի մէջ, որոնք վնասակար են առողջութեան համար:

17) Նրանք ցանկանում են, որ բանւորներից ընտրված մարդիկ հսկեն այն օրէնքների գործադրութեան վրա, որոնցով ապահովվում է աշխատանքը: Նրանք ցանկանում են, որ այն բոլոր վէճերն ու անհամաձայնութիւնները, որոնք ծագում են բանւորների և գործատէրերի միջև, քննվեն բանւորների ու գործատէրերի կողմից հաւասար թւով ընտրված պատգամաւորների կողմից:

18) Նրանք ցանկանում են, որ պետութիւնը գործարանատէրերի, գաւօդչիկների ու կալուածատէրերի հաշուին ապահովագրէ բոլոր բանւորներին, որպէս զի հիւանդութեան կամ մի դժբաղդութիւն պատահած դէպքում, երբ բանւորը անընդունակ է դառնում աշխատելու, նա կարողանայ ապահովագրական օժանդակութիւն ստանալ: Նոյնպէս և ամեն մի բանւոր պէտք է պետութեան կողմից ապահովագրված լինի ծերութեան և աշխատելու ընդունակութիւն կորցնելու դէպքերի համար:

VIII

Հարկերի պակասեցումը: 19) Նրանք ցանկանում են, որ թէյը, շաքարը, գինին, կերոսինը, լուցկին, երկաթը և բոլոր միւս ամենքի համար անհրաժեշտ ապրանքները էժանանան: Դրա համար պէտք է այդ ապրանքներից վերացնել պետական ակցիզն ու մաքսերը, իսկ միւս ապրանքներից պիտի պակասեցնել մաքսերը: Ախր հիմայ պետական ամենագլխաւոր եկամուտները գոյանում են զանազան ապրանքների վրա դրված ակցիզներից ու մաքսերից: Ով հիմա օրինակի համար մի փունտ շաքար կամ կերոսին է առնում, նա դրա հետ միասին և պետական հարկ է վճարում, որ կոչվում է անուղղակի հարկ, որովհետև դա վճարում է ոչ թէ ուղղակի կերպով, ինչպէս օրինակի համար հողային տուրքը, այլ անուղղակի կերպով, ապրանքի միջոցով: Վաճառականը կամ ֆաբրիկանտը առաջուց պետական գանձարանին ակցիզ կամ մաքս է վճարում, իսկ յետոյ արդէն ապրանք առնողներից յետ է ստանում իր վճարածը: Հէնց դրա համար է, որ հիմա բոլոր ապրանքները թանկ են և աղքատ մարդու համար հիմա ապրելը շատ դժուարացել է: Եւ որովհետև աղքատների թիւը շատ աւելի մեծ է, քան հարուստներինը, ուստի նրանք բոլորը միասին զանազան ապրանքներ առնելով, պետական գանձարանին շատ աւելի մեծ ակցիզ ու մաքս են վճարում, քան բոլոր հարուստները միասին: Հետևապէս գանձարանի ամենագլխաւոր եկամուտները, որոնցով կառավարվում է ամբողջ պետութիւնը,—ամբողջ զօրքը, բոլոր մինիստրները, բոլոր չինօվնիկները, վճարվում են աւելի աղքատ մարդու կողմից, քան հարուստների: Որպէս զի առաջիկայում էլ այդպէս չը լինի, որպէս զի պետութեան ծախսերի համար վճարվող հարկերը բարեխղճութեամբ ու արդարացի կերպով ամենքի վրա ծանրանան, հարկաւոր է մի քանի ապրանքների վրայից բոլորովին վերացնել մաքսն ու ակցիզը, իսկ միւսներից էլ պակասեցնել նրանց և այդ անուղղակի հարկերը փոխարինել եկամուտի համաձայն հարկերով: Ով աւելի մեծ եկամուտ է ստանում, թող նա էլ աւելի վճարի պետական ծախսերի համար, և որչափ մէկը աւելի մեծ եկամուտ ունի, նոյնչափ էլ նա իր եկամուտի իւրաքանչիւր րուբլուց աւելի ուղղակի հարկ պիտի վճարի:

IX

Ժողովրդական կրթութիւն: 20) Սահ. Դեմ. կուսակցութեան պատկանող մարդիկ ցանկանում են, որ լաւ ուսումնարաններ շատ բացվեն, որ բոլոր երեխաները, տղայ թէ աղջիկ, որբերն ու աղքատները կարողանան ձրի ուսումնարան գնալ, որ կարելի լինի սկզբնական կրթութիւնը ստիպողական դարձնել բոլորի համար: Նրանք ցանկանում են, որ այն երեխաները, որոնք ցանկանում են գիւղական ուսումնարանից յետոյ իրանց ուսումը շարունակել, կարողանան առանց արգելքների գնալ ուսանելու քաղաքային ուսումնարաններում և գիմնազիաներում: Նրանք նոյնպէս ցանկանում են, որ սկզբնական ուսումնարաններում շատ բան սովորեցնեն, որ աշակերտները աւելի լաւ և աւելի շատ բան գիտենան իրանց հայրենիքի մասին, նրա անցեալ կեանքի, նրա պետական կազմի, նրա օրէնքների մասին և իրանց իրաւունքների ու պարտականութիւնների մասին:

X

Գիւղական համայնքի ծախսերը: 21) Նրանք ցանկանում են, որ բոլոր մարդիկ, որոնք գիւղական համայնքում են ապրում, թէ ազնւականները, թէ վաճառականները և թէ մեշչանները համայնական տուրքեր վճարեն, համայնքը կառավարելու համար, և մասնակցութիւն ունենան համայնքի բոլոր գործերում: Թէ չէ՝ հիմա վճարողները միայն գիւղացիք են, իսկ համայնքից օգտվում են բոլորն էլ:

Քաղաքային խորհրդի եւ զեմստվօյի ընտրութիւնների մասին: 22) Նրանք ցանկանում են, որ քաղաքային և զեմսկի հաստատութիւններում ընտրութիւնները այնպէս չը կատարվեն, ինչպէս հիմա, այլ այդ ընտրութիւններին պիտի մասնակցէ ամբողջ ժողովուրդը հաւասար իրաւունքներով, առանց դասերի (сословіе) և կարողութեան խտրութեան:

XI

Ի՞նչպէս յաւագոյն կերպով ձեռք բերել այն բոլորը, ինչ որ նրանք ցանկանում են: 23) Բայց Սահ. Դեմ. կուսակցութեան պատկանող մարդիկ գիտեն, որ այժմեան պետական կարգերի օրով, այժմեան պետական կազմակերպութեան մէջ անկարելի է հասնել այն բոլորին, ինչ իրանք ցանկանում են: Մինիստրներն ու չինօվնիկները, որ Ռուսաստանում ամեն բան կառավարողներն են հիմա, երբեք լաւ կերպով չեն անի այն, ինչ որ յիրաւի հարկաւոր է ամբողջ ժողովրդին, որպէս զի սա լաւ և ազատ կարողանայ ապրել: Այդ պատճառով էլ Սահ. Դեմ. կուսակցութեան պատկանող մարդիկ ցանկանում են, որ ամբողջ ռուսական երկրի համար օրէնքներ գրէին ու կարգեր հաստատէին ոչ թէ մինիստրներն ու չինօվնիկները, այլ ամբողջ Ռուսաստանի ժողովրդի կողմից ընտրվածները, ամեն մի գաւառից, օրինակի համար, մի ընտրված մարդ, թւով մօտաւորապէս ութ հարիւր ընտրվածներ ամբողջ ռուսական երկրից:

24) Նրանք ցանկանում են, որ Պետական Դումայի կամ ժողովի պատգամաւորների ընտրութիւնները բոլորի համար լինեն ընդհանուր և հաւասար: Որ ընտրութիւնների ժամանակ բոլոր բնակիչները, բոլոր Ռուսաստանի քաղաքացիները, թէ տղամարդիկ, թէ կանայք, թէ հարուստներ և թէ աղքատներ կարողանան իրանց ձայնը տալ և ընտրել նրան, որի վրա կարելի է յոյս դնել, թէ նա այնպիսի լաւ օրէնքներ կը պաշտպանի, որոնք օգտակար են ամբողջ ժողովրդին, և թէ նա այնպիսի կարգեր կը պաշտպանի, որոնց մէջ ամենքն էլ կը կարողանան հանգիստ և ազատ ապրել:

25) Նրանք ցանկանում են, որ ընտրութիւնները լինեն ուղղակի, որպէս զի ամեն մարդ կարողանայ իր քուէն տալ իր ընտրած մարդին, որին որ ինքը ցանկանում է պետական ժողովին ուղարկել, որի վրա ինքը յոյս ունի, թէ նա ամբողջ ժողովրդի համար օգտակար օրէնքներ ու լաւ կարգեր կը պաշտպանի, և որ պէտք չը լինի նախ ինչ որ ընտրողներ ընտրել, որպէս զի նրանք գնան յետոյ պատգամաւորներ ընտրեն Պետական ժողովի կամ Դումայի համար: Ի՞նչու ես պիտի իմ ձայնը մի ուրիշին վստահեմ, որպէս զի նա իմ փոխարէն պատգամաւոր ընտրի, քանի որ ես ինքս էլ կարող եմ իմ ձայնը ուղղակի տալ նրան, ում որ ցանկանում եմ, որ գնայ օրէնքներ մշակելու և աւելի լաւ կարգեր հաստատելու:

26) Նրանք ցանկանում են, որ ընտրութիւնները գաղտնի լինեն, որպէս զի ամեն մարդ առանց քաշվելու կարողանայ իր քուէն տալ նրան, ում որ ուզում է, չը վախենալով որ ուժեղներն ու հարուստները, եթէ իմ ընտրութիւնը նրանց դուր չը գայ, կարողանան յետոյ ինձ վնասել դրա պատճառով: Գաղտնի քուէարկութեան դէպքում ոչ ոք էլ չի իմանայ թէ ես ում տուեցի քուէս:

27) Նրանք ցանկանում են, որ ընտրված պատգամաւորների անձը անձեռնմխելի լինի, որ ոչ ոք առանց Պետական Դումայում թոյլտուութեան չը համարձակվի նրան ոչ ձերբակալել և ոչ էլ դատի ենթարկել: Հարկաւոր է, որ նա կարողանայ ազատ կերպով միշտ ճշմարտութիւնը խօսել, վարվել իր խղճի համաձայն և պինդ պաշտպանել ժողովրդի իրաւունքներն ու շահերը:

XII

Պետական Դումայի իրաւունքների, նրա կազմի մասին: 28) Նրանք ցանկանում են, որ ընտրված պատգամաւորները ամենից առաջ հաւաքվեն Պետերբուրգի առաջին սահմանադիր ժողովում և որոշեն ամբողջ ժողովրդի անքակտելի ու հիմնական իրաւունքները: Թող որոշեն, թէ ինչ եղանակով պէտք է օրէնքներ հրատարակվեն, ով պիտի նրանց մշակի, ի՞նչպէս հսկել նրանց գործադրութեան վրա, և որոնք պիտի լինեն ժողովրդի գլխաւոր իրաւունքները, և ի՞նչպիսով պիտի երաշխաւորեն նրա ազատութիւնը: Պատգամաւորները պէտք է հաստատ կերպով որոշեն, որ յետոյ կարելի չը լինի հրատարակել ոչ մի օրէնք, որը հակառակ լինի այդ հիմնական, անքակտելի օրէնքներին ամբողջ ժողովուրդների իրաւունքների վերաբերեալ, և թող բոլոր մինիստրները, բոլոր զօրքերը և ամբողջ ժողովուրդը Ցարի հետ միասին երդվեն, որ ոչ իրանք կը խախտեն և ոչ էլ մի ուրիշին թոյլ կը տան խախտելու պետութեան այդ հիմնական օրէնքները, որոնք կը կոչվեն Սահմանադրութիւն, որպէսզի ոչ ոք և ոչ մի բանով չը կարողանայ ժողովրդական իրաւունքներին ու ժողովրդական ազատութեանը ձեռնամուխ լինել:

29) Նրանք ցանկանում են, որ ժողովրդից հաւաքած փողերից և ոչ մի կոպէկը չը ծախսվի առանց Պետական Դումայի թոյլտուութեան, և որ ընտրված պատգամաւորները իրաւունք ունենան ամեն մի մինիստրից հաշիւ պահանջելու, թէ արդեօք իրաւացի կերպով են ծախսված ժողովրդական փողերը և թէ նա ինչպէս է վարում իրան յանձնված գործերը. թէ արդեօք բոլոր ժողովրդին էլ օգտակար է նրա ծառայութիւնը և թէ նա ինքը, կամ իր չինօվնիկները չեն վնասում ժողովրդի շահերին: Եւ մինիստրները պարտաւոր են այդպիսի հաշիւ տալ ընտրված պատգամաւորներին Պետական Դումայում: Թէ չէ՝ հիմա ժողովուրդը հարկեր է վճարում և բոլորովին չէ իմանում, թէ արդեօք մինիստրներն ու չինօվնիկները ճիշտ կերպով են ծախսում իրանից հաւաքած փողերը, և թէ արդեօք ժողովրդի օգտին են ծախսվում այդ արիւն-քրտինքով վաստակած դրամները: Իրանք մինիստրները և չինօվնիկները հիմա վերաքննում են միմեանց, բայց չէ՞ որ յայտնի է, որ ձեռքը ձեռքին լուանում է, որովհետև երկուսն էլ ուզում են սպիտակել:

30) Սահ. դեմոկ. կուսակցութեանը պատկանող մարդիկ ցանկանում են, որ Ցարը մինիստրներ նշանակի Պետական Դումայի ընտրված պատգամաւորներից, որովհետև նրանք միւսներից աւելի լաւ ծանօթ կը լինեն ժողովրդի կարիքներին, և որ մինիստրներ նշանակվեն այն կուսակցութեան պատգամաւորներից, որին Պետական Դումայի պատգամաւորներից մեծամասնութիւնն է պատկանում:

—

Ահա թէ ինչ են ցանկանում այն մարդիկ, որոնք պատկանում են Սահմանադրական-Դեմոկրատական կուսակցութեանը:

Ո՛վ որ նոյնն է ցանկանում, թող անդամ գրվի այդ կուսակցութեանը և թող ընտրութիւնների ժամանակ իր ձայնը տայ այն թեկնածուներին, որոնց Պետական Դումայի համար կը ներկայացնի սահմանադրական դեմոկրատական կուսակցութիւնը:

Հայ-Թուրքական խաղաղարար մասնաժողովի մուսուլման պատգամաւորները, Թիֆլիսում պարապմունքները վերջացնելով, վճռել են Գանձակում մարտի 16-ին մուսուլման ազգաբնակութեան ներկայացուցիչների ժողով գումարել՝ վերջիններիս ծանօթացնելու Պետական Դումայի դրութեան, ընտրութիւնների եղանակի հետ և այլն։

—

Թիֆլիսի նահանգապետը դիմեց քաղաքապետին առաջարկելով, որ նա միջոցներ ձեռք առնի առանց յետաձգելու բանալ ժամանակաւոր քաղաքային հիւանդանոց Միքայէլեան հիւանդանոցի գլխաւոր բժշկի տեղեկագրի համաձայն, որով նա յայտնում է, որ հիւանդանոցում տեղ չը լինելու պատճառով ադմինիստրացիան ստիպված է մերժել բազմաթիւ հիւանդներին, նոյն իսկ ծանր հիւանդներին և վիրաւորվածներին։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը դիմեց Փոխարքային հետևեալ հարցով, արդեօք նա չի ցանկանայ, որ Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու հրաւիրվի Վարշավայի րէալական դպրոցի տեսուչ իշխ. Կ. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը։

—

Թիֆլիսի սահմանադիր-ռամկավար կուսակցութեան բիւրօյի նախագահը առաջարկել է տեղական քաղաքագլխին իր կուսակցութեան անդամներից 40 հոգու ձրի աշխատելու քաղաքամասերի՝ Պետական Դումայի ընտրութիւններ կատարող՝ ընտրողական մասնաժողովներում։

—

Թիֆլիսի վաճառականական ընկերութիւնը մերժեց ընդունել առևտրական ուսումնարանի հոգաբարձուական խորհրդի միջնորդութիւնը՝ Թոյլատրել վարկային հաստատութիւններից մէկի մէջ գրաւ անելու ուսումնարանի համար կառուցված նոր շէնքը ուսումնարանի պարտքը վճարելու համար, որը արդէն 25 հազարի է հասնում, և որոշեց խնդրել ուսումնարանի պատուաւոր հոգաբարձու Ա. Ի. Մանթաշեանին, որի անունով կոչվում է ուսումնարանը, վճարել այդ գումարը իր սեպհական միջոցներից։

—

Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան Թիֆլիսի բիւրօն կենտրոնական կոմիտեից պ. Կոկօշկինի «Объ областной автономіи» բրօշիւրից մեծ քանակութեամբ ստացել է տարածելու համար։ Բրօշիւրի գինն է 2 կոպ.։

—

«Голосъ Кавказа» Թերթի խմբագրութեան կողմից հեռացված են քահ. Գօրօդցեվ և պ. Շավրօվ աշխատակիցները։ «Сов.»

—

Քաղաքային զինուորակոչական ատեանը ապրիլի 15-ից սկսելու է այս տարվայ զինուորակոչների ցուցակների և ընտանեկան պայմանների շնորհիւ, արտօնութիւններ վայելողների տեղեկութիւնների ստուգութիւնները։ Այդ տեղեկութիւնները զինուորակոչները պէտք է ներկայացնեն Թիֆլիսի քաղաքային վարչութեանը ներկայ ամսում։

—

Վրաց եկեղեցուն աւտօկէֆալութիւն տալու հարցը ռուսաց սինօդը ուղարկել է կովկասեան Փոխարքային վերջնական եզրափակման համար։

—

Անցեալ տարի նոյեմբերին Թիֆլիսի 9-րդ քաղաքամասում այրված մասնաւոր սեփականութեան գոյքերը, Թուրքական մէյդանի հրապարակը ընդարձակելու նպատակով, քաղաքի կողմից գնելու զեկուցումը արդէն պատրաստ է և շուտով ներկայացվելու է դումային։ Դրանց գնելը քաղաքի վրա կարժենայ 150—200 հազար րուբլի։

—

Թիֆլիսի գեղարուեստական ուսումնարանի դիրեկտօր պ. Կանդաուրօվը խնդրամատոյց է եղել Թիֆլիսի նահանգապետին, որպէս զի վերջինս առաջարկէ քաղաքային դումային՝ յանձնելու յիշեալ ուսումնարանին դումայի յատկացրած 2,000 րուբլի տարեկան նպաստը, առանց որ և է սահմանափակումների, մինչդեռ դուման որոշել է տալ այն պայմանով միայն, որպէս զի ուսումնարանը պահէ ստիպենդիանտներ քաղաքային վարչութեան ընտրութեամբ։ Պ. Կանդաուրօվը այդ միջնորդութիւնը պատճառաբանում է նրանով, որ քաղաքի տուած նպաստը ամբողջապէս ծախսվում է բնակարանի վարձը վճարելու համար։

—

Թիֆլիսի Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէօդօրօվնայի իգական գիմնազիայի ծնողական շրջանը՝ մի որոշ գումարով համաձայնութիւն տալով Մէյերխօլդի դրամատիքական խմբի հետ այս մարտի 13-ին, երկուշաբթի օրը, յօգուտ վերոյիշեալ գիմնազիայի չքաւոր աշակերտուհիների —կազմում է ներկայացում։ Անցեալ 1905 ծանր տարին աւելի զգալի կերպով աւելացրեց խեղճ աշակերտուհիների թիւը և կասկած չը կայ որ ծնողական շրջանից սկսած այդ օգտաւէտ գործը կը հանդիպէ Թիֆլիսի հասարակութեան կողմից ջերմ համակրանքի։ Տրվելու են Իբսէնի «Տեսիլք» —դրամա 3-գործող. և «Գաղտնի խորհրդականի քունը»—Պօտապէնկօյի. քաղաքական կատակերգութիւնը. գալերէայի տոմսակները վաճառվելու են բացառապէս աշակերտներին։

—

Պաշտօնից հեռացված կովկասեան շրջանի առաջին դիստանցիայի կառավարիչ, ճանապարհների հաղորդակցութեան ինժենէր Քալանթարօվը, Փոխարքային ներկայացրած բողոքի առիթով, կրկին ընդունված է ծառայութեան մէջ, 3-րդ դիստանցիայի կառավարչի պաշտօնով նոյն շրջանում (Բօրժօմ)։

—

Փոխարքայի դիւանատունը, յանձնեց Թիֆլիսի նահանգապետին Փոխարքայի հաստատած պատճէնը 15 փետրվարի զեկուցման, որ վերաբերում է կով. զինւ. շրջանի ինժենէրական վարչութեան ծախքերին, որ արված են Կովկասի քաղաքների հաշւով, քաղաքացիական իշխանութիւններին աջակցելու համար ուղարկված զօրամասերի բնակատեղերի համար, խնդրելով ծանօթացնել քաղաքային շահախնդիր ինքնավարութիւններին գործի դրութեան հետ և առաջարկել ինքնավարութիւններին, վարչութեան հետ միասին մշակել այնպիսի պայմաններ, որոնցով կարելի լինի օգնել քաղաքային գանձարանին պակասեցնելու այն գումարները, որ արել է ինժ. վարչութիւնը քաղաքի հաշւին—քաղաքացիական իշխանութիւնների համար ուղարկված զօրքերի բնակատեղիների վրա, նոյնպէս ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վրա, որ նպաստ կարելի է տալ միայն այն քաղաքներին, որոնց նիւթական դրութիւնը աւելի ճնշված է։ Որովհետև Փոխարքայի տրամադրութեան տակ եղած դրամը չէ համապատասխանում խնդրած գումարին։ Այս ծանուցիրը ուղարկված է Թիֆլիսի և Կովկասի մնացած քաղաքների ինքնավարութիւններին։

—

Մարտի 11-ին նշանակված է Թիֆլիսի քաղաքային վարչութեան տեխնիքական մասնաժողովի և քաղաքային բժիշկների նիստը, Նիկոլայէվսկի կամուրջի մօտ քաղաքին պատկանող հողի վրա, քաղաքային պրօֆէսիօնալ արհեստաւորների, կենտրոնական բուժարանի, լոմբարդի և ուրիշ հաստատութիւնների համար. շինութիւն կառուցանելու հարցը քննելու նպատակով։

—

Ռուսիայի երկաթուղիների բոլոր ծառայողների թիւը հասնում է 1,070,000 հոգու։ Այդ ծառայողներից մեծամասնութիւն են կազմում օրով բանող բանւորները, որոնց թիւը 265,000 է։ Այդ ծառայողների ընդհանուր ծախսի քանակը տարեկան 240 միլ. րուբլի է, կամ ուրիշ խօսքով սեպելով՝ ծառայողների ռոճիկը բոլոր ծախսերի 50%-ն է կազմում։ Իւրաքանչիւր ծառայող աշխատում է գանձարանի համար, միջին թւով, 400 ր. տարեկան, և միջին թւով ստանում է օրական—68 կոպէկ։

—

«Одесск. Нов.» Թղթակիցը հաղորդում է, որ կոմս Վիտտէն մի ընդարձակ զեկուցում է պատրաստել օտար ցեղերի հարցի մասին, որով նա անհրաժեշտ է համարում բոլոր օտար ցեղերին բնիկ ազգաբնակութեան հետ հաւասար իրաւունքներ տալ։ Այդ զեկուցումը նախ կը քննվի Պետական Խորհուրդի մէջ և ապա կը ներկայացվի Պետական Դումային։

Պետերբուրգի բանւորները հաւաքվելով Միուզկի պարկում Պետական Դումայի ընտրութիւնների համար՝ հետևեալ վճիռն են կայացրել. «Պետական Դուման օգոստոսի 6-ի հիմունքով—չէ համապատասխանում ժողովրդի պահանջներին և կարիքներին, այլ լոկ դա մի ծաղր է ժողովրդի հասցէին։ Ընտրողական օրէնքը առաւելութիւններ է շնորհում հարուստներին, կալուածատէրերին և գործարանատէրերին ընդդէմ խեղճերի, գիւղացիների և բանւորների։ Ընտրողական իրաւունքը սահմանված է նրա համար միայն, որ ժողովրդի իսկական ներկայացուցիչների փոխարէն՝ կառավարութեան հետ համերաշխ մարդիկ և արբանեակներ հրաւիրեն։ Պետական Դուման հարկաւոր է կառավարութեանը փոխառութիւն ձեռք բերելու, և այդ Դուման ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի յիմար խաղ ժողովրդական ներկայացուցչութեան գործում։ Ռուս ժողովուրդը առաջվանից աւելի է զարգացած։ Ահա այս պատճառով—մենք ընտրողական այդ կատակերգութեանը ոչ մէկ մասնակցութիւն ունենալ չենք կամենում։ Մենք պահանջում ենք Սահմանադիր Ժողով՝ ընդհանուր, ուղիղ, հաւասար և գաղտնի ընտրողական իրաւունքներով։ Մասնաւորապէս մենք պահանջում ենք՝ բոլոր բանւորական դասակարգից կալանաւորվածների անյապաղ ազատումը բանտերից, ինչպէս նաև քաղաքային հիմնարկութիւնների ծառայողներին, և բացի այդ՝ բոլոր արձակվածներին ընդունել նորից իրանց պաշտօններում»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 մարտի

ԿԱԶԱՆ, 7 մարտի։ Համալսարանի ռէկտոր ընտրվեց ռուսաց իրաւագիտութեան պատմութեան պրօֆեսօր Զագօսկինը։

ԿՐՕՆՇՏԱԴ, 8 մարտի։ Կայացաւ զինուորածովային դատարանի 39-րդ նիստը՝ նաւաստիների անկարգութիւնները քննելու համար։ Վերջացան լրացուցիչ վկաների հարցաքննութիւնը. քննութիւնը կը վերջանայ վաղը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի։ «Русь» լրագիրը տալիս է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի խօսակցութիւնը։ Մինիստրն ասել է, որ ընդհանուր պարտադիր ուսման նախագիծը վերջանում է և տրվելու է Մինիստրների Խորհրդին։ Նախագծի իրականացման համար հարկաւոր է 245 միլ. րուբլի։ Դասաւանդութեան գործը դժուարութիւնների չի հանդիպի այլևս։ Ուսուցիչների ռոճիկը պէտք է աւելացվի, ամիսը մօտ 30 րուբլի minimum-ով։ Հասարակութիւնը լայն մասնակցութիւն պէտք է ունենայ դպրոցական գործում։ Եկեղեցական ծխական դպրոցները այսուհետև հաշուելու են ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան դպրոցների կազմում։ Օտար ազգերի մասնաւոր դպրոցներում դասաւանդութիւնը լինելու է տեղական գերակշռող ազգաբնակութեան մայրենի լեզուով։ Սակայն իրաւունքներ ձեռք բերելու համար պահանջվում է վերջիններից ռուսերէնի քննութիւն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մարտի։ Մարտի 10-ին կայանալու է վարկային գործիչների համաժողովը՝ քննելու համար գիւղացիական բանկի առաջարկը մասնաւոր բանկերում գրաւ դրած կալուածքների պարտաւորութիւնները իրա վրա ընդունելու մասին։—Վառացիի նախագահութեամբ առանձին խորհրդակցութիւնը անբերրիութիւնից վնասվածների օգտին յատկացրեց կրկին 1418870 րուբլի։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 7 մարտի։ Օչակօվից վերադարձաւ «Պրուտ» փոխադրանաւը մեղադրեալներով, բացի հրացանազարկ արած Շմիդտից և երեք նաւաստիներից։

ՍԼՕԲԵԼ, 7 մարտի։ Քաղաքային ընտրողները ընտրեցին մի հրէայ սօցիալ-դէմօկրատ, մի փաստաբան, մի չէզոք մարդու, փայտավաճառ սօցիալ-դէմօկրատ և մի կաթօլիկ բժիշկ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի։ Լրագիրների ասելով, գիւղացիների իրաւակարգութեան հարցի առիթով կազմված առանձին խորհրդակցութիւնը Գուրկօյի նախագահութեամբ, վերսկսում է իր պարապմունքները վերաքննելու համար գիւղացիների վերաբերեալ ընդհանուր կանօնները 1905 թ. փետրվ. 3-ի մանիֆեստի հետ համաձայնեցնելու նպատակով։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը բացատրեց, որ օրէնքը իրաւունք չէ տալիս ծառայողներին—ընտրութիւններին մասնակցելու համար ընդհատել իրանց պարտականութիւնների կատարումը։ Նրանք միայն ծառայութիւնից ազատ ժամանակ կարող են մասնակցել ընտրութիւններին։

ՓԱՐԻԶ, 7 մարտի։ «Տան»-ի լուրերի համաձայն կոմս Կասսինին Լամզդօրֆից ստացել է առաջնորդելու և միւս պատուիրակներին ծանուցանելու համար մի հեռագիր, որ վճռականապէս հերքում է այն, որ իբր թէ Ռուսաստանը խորհուրդ է տուել Ֆրանսիային ընդունել մարօկկեան ոստիկանութեան համար կազմած աւստրիացիների նախագիծը և իբր թէ Ռուսաստանը կարելի է համարում, որ Ֆրանսիան համաձայնէր Կազաբլանգի ոստիկանութեան կազմակերպութեան աջակցութեամբ։ Հեռագիրը պնդում է, որ Ռուսաստանը՝ Ֆրանսիայի վերաբերմամբ պահում է իրան որպէս հաւատարիմ դաշնակից։

ՊԱԼԷՐՄՕ, 7 մարտի։ Մարտի 5-ի գիշերը Ուստիկա կղզում զգացվել է երկրաշարժ, եղել են 21 շատ խիստ ցնցումներ, ազգաբնակութիւնը երկիւղի մէջ է։

ԼՕՆԴՕՆ, 7 մարտի։ «Դէյլի Տելեգրաֆ»-ին հաղորդում են Տօկիօից, որ հաղորդակցութեան, վերականգնելովը տեղեկութիւններ են հասնում—Ֆօրմօզա կղզում մարտի 4-ին պատահած երկրաշարժի մասին։ Դատիօ, Բայլիկօ, Շինկօ ծաղկած քաղաքները բոլորովին կործանված են։ Կայսյում մահացել են 2000 տեղացի և 7 ճապօնացի։ Վնասները հաշվում են 9 միլ. ֆունտ ստերլինգ։ Մարտի 5-ին Ճապօնիայում ևս զգացվել է երկրի թեթև տատանում։

ԹԵՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ, 7 մարտի։ Երեկոյեան ժամը 7-ին զգացվեց թոյլ երկրաշարժ—հիւսիսից դէպի հարաւ ուղղութեամբ։

9 մարտի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի։ Պաշտօնական։ Մինիստրների Խորհուրդը մարտի 7-ի ժողովում քննեց ֆինանսների մինիստրի ֆինանսական մասի առաջիկայ վերակազմութեան մասին կազմած ծրագիրը, որ յանձնվելու է Պետական Դումայի քննութեան։ Հաւանութիւն տալով ընդհանրապէս Գ. Խ. Շիպօվի ենթադրութիւններին, որ մօտիկ ապագայում հրատարակվելու են ի գիտութիւն ընդհանուրի։ Խորհուրդը որոշեց յանձնարարել ֆինանսների մինիստրին գործադրել վերոյիշեալ ծրագիրը, որով գտաւ որ թղթի հարկը կարելի է մտցնել միայն այն դէպքում, եթէ չառաջադրվեն ուրիշ միջոցներ պետական բիւջէտը բաղդատելու համար։ Քննութեան առնելով՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան արած եզրակացութիւնները այն միջոցների մասին, որ անհրաժեշտ են ռուսաց բարձր կրթական հաստատութիւնները կարգաւորել, Խորհուրդը որոշեց վերադառնալ կրկին այդ հարցի քննութեան, երբ մինիստրութիւնը նոր լրացուցիչ ենթադրութիւններ կառաջարկէ, Ապա Խորհուրդը զբաղվեց ուրիշ հերթական հարցերի քննութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի։ Լրագիրների հաղորդած լուրի առիթով, որ իբր թէ ներքին գործերի մինիստրը հրամայել է Ռուսաց և Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնների գրաքննիչին, գրաւել ընտրութիւնների անաջող ելքի մասին խփած հեռագիրները, որպէսզի հրաժարվեն ընտրութիւններ կատարել կարող ենք հաղորդել, որ այդ լուրը սխալ է և մտածածին է այն հասարակ պատճառով, որ Պետերբուրգի գործակալութեան հեռագիրները գրաքննութեան չեն ենթարկվում։ «Рѣчь» լրագիրը հաղորդեց, որ իբր թէ Պետական Խորհրդում քննվում էր մահվան պատիժը վերացնելու հարցը. «Русск. Госуд.» յայտնում է, որ այդ հարցը երբէք քննութեան չէ առնված։ «Զարգացման Լիգայի» կատարողական ժողովի շարունակութիւնը, որ պէտք է ընտրէ 24 անդամներ, կայանալու է մարտի 12-ին Տօնիշէվսկի դպրոցի դահլիճում։ Հրաւիրվում են Լիգայի գաւառական անդամները։

ՊՐՕՆՍԿ, 8 մարտի։ Մանր հողատէրերի երկրորդ համաժողովին 662 ընտրողներից ներկայ էին 25-ը։ Ընտրված են մի քահանայ, 2 ազնուական, մի վաճառական 2 գիւղացի—մէկը նոյեմբերի 17-ի դաշնակցութեան անդամ, 5 «հայրենասէրներ», 3 պահպանողականներ—բարձր, միջին և ստորին կրթութեամբ։

ՍԱՄԱՐԱ, 6 մարտի։ «Курьеръ»-ի ասելով, Չիրկասում ձերբակալված է ընտրված լիազօր գիւղացի Զուբկօվը։

ԲԵՆԴԵՐ, 8 մարտի։ Բենդերում մարտի 12-ին նշանակած ընտրութիւնները նահանգապետի հեռագրի համաձայն դադարեցնվում են ցնոր կարգադրութիւն։

ՈՒՍՏԻԿԱ, 8 մարտի։ (Իտալիա)։ Տեղ հասան նաւերը, որպէսզի անհրաժեշտ դէպքում վերցնեն բնակիչներին և բանտարկեալներին։ Ամբողջ ազգաբնակութիւնը բաց երկնքի տակ է. զգացվում են ստորերկրեայ ուժեղ հարուածներ։

ՄՕՍԿՎԱ, 8 մարտի։ Լուրերին նայած, ոստիկանութիւնը հետամուտ է եղել փոխադարձ վարկի վաճառականական ընկերութեան կողոպտիչներին։ Ենթադրում են, որ նրանք պատկանում են Վարշավայի կողոպտման խմբին, և կապ չունեն յեղափոխականների հետ։ Դեռ փետրվ. 20-ի մօտերը վաճառականական ընկերութեան տան մէջ եկ ու մուտ են անում ինչ որ կասկածաւոր անձինք, որոնք կարողացել են ծանօթանալ շինութեան հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի։ Դատաստանական պալատը դատապարտեց «Новости» լրագրի խմբագրին 1 տարվայ բանտարկութեան։ Լրագրի հրատարակումը ընդ միշտ դադարեցրված է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի։ Պաշտօնական։ Պետական Խորհուրդը մարտի 8-ին քննեց արդարադատութեան մինիստրի առաջարկութիւնը այն միջոցների մասին, որոնցով կարելի է կրճատել աւելի կարևոր քրէական գործերի կատարելու ժամանակամիջոցը։ Միևնոյն ժամանակ անհրաժեշտ է համարված կրճատել դատաստանական պալատի ձեռնհասութիւնը դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Մի քանի գործեր, որ ենթակայ են դատաստանական պալատին, տրվում են նահանգական դատարանը, նայած պատժի չափին որ քննումէ այդ գործերը երդուեալ ընթերականների մասնակցութեամբ կամ առանց նրանց։ Վերոյիշեալ գործերի շարքում պէտք է դնել նաև—կառավարչական իշխանութիւնը և երկիրը խլելու, մի քանի գործերի կատարման և երկաթուղային և ջրային հաղորդակցութեան շահագործութեան դէպքերում արված յանցաւոր դրդման գործերը, ինչպէս և իշխանութեան ընդդիմադրութեան զանազան տեսակի գործեր։ Իշխանութեան ընդդիմադրութեան ոչ այնքան կարևոր դէպքերում, անհրաժեշտ է համարված բանտարկութեան ժամանակամիջոցը դարձնել 2 ամսուց ոչ աւելի։ Դատաստանական պալատից անցնում են նահանգական դատարանին՝ կայսերական տան անդամներին—ոչ ներկայութեամբ արված վիրաւորանքի մի քանի գործեր։ Նահանգական դատարանի գործը թեթևացնելու նպատակով անհրաժեշտ է համարված, վերջինիս ենթակայ մի քանի յանցաւոր գործեր յանձնել հաշտարար դատարաններին, իսկ այն տեղերում, ուր այդպիսիները չը կան—նահանգական դատարանի գաւառական անդամներին։ Անհրաժեշտ է գտած, նոյնպէս, պարզ ձև տալ դատաստանական պալատների—պետական յանցանքների մէջ մեղաւոր ճանաչված գործերի քննութեան կարգին, դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Իսկ ինչ վերաբերում է ժամանակաւոր միջոցների բնաւորութիւն կրող ձեռնարկութիւններին, ամենագլխաւորը ներկայանում է այն, որ մասսայական անկարգութիւնների և ջարդերի վերաբերեալ գործերի քննութիւնը յանձնվելու է նահանգական դատարանի առանձին խորհրդի, որ քննելու է այդ ամենը դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Պետական յանցաւոր դրդիչ բոլոր գործերի վերաբերմամբ, որ կատարվում են մամուլի միջոցով, Թոյլատրված է գործադրել 545 յօդուածը, որի համաձայն գործի քննութեան կարելի է ձեռնամուխ լինել առանց նախնական քննութեան, եթէ դատախազը և դատարանը կարևոր չեն գտնում։ Ապա ցանկալի է համարվում կրճատել մինչև երեք օրով մի քանի ձևական ժամանակամիջոցներ։ Պետական Խորհուրդը իր ընդհանուր ժողովում հաւանութիւն տուեց վերոյիշեալ բոլոր ենթադրութիւններին։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հրամանագրել է, գիտութեան ճեմարանում և բոլոր համալսարաններում մարտի 20-ին ընտրութիւններ կատարել Պետական Խորհրդի համար։ Ընտրեալները պէտք է 30 հոգի լինեն, հաշուելով իւրաքանչիւր հաստատութիւնից 3-ական մարդ։ Նրանք ժողովվելով Պետերբուրգ՝ ընտրում են 6 անդամներ Պետական Խորհրդի համար։

Մարտի 1-ին, II ներքին փոխառութեան տիրաժի ժամանակ 500 ր. շահող տոմսակները հետևեալներն են.

6828	48	18622	6	6811	41
588	21	11765	41	18298	16
8141	13	797	7	18888	5
6192	7	6774	6	10157	17
2136	30	7352	43	10585	10
9896	48	12231	34	17703	6
9972	1	5568	50	4303	35
4813	38	8269	32	4955	40
14579	23	15558	2	12499	3
17329	36	13895	4	17000	43
18888	36	19315	15	6186	32
5980	22	2236	1	3200	43
8951	9	11752	44	7454	26
15848	5	10078	21	4522	16
11951	50	6048	29	6876	22
6340	26	6016	1	16265	27
18008	26	14100	50	14479	2
11440	5	4280	13	19920	18
18942	37	14977	47	13340	22
1028	26	18182	21	17544	26
14700	41	7658	31	526	2
335	49	9476	18	13521	14
3405	49	15597	29	9738	23
16277	37	8092	9	8590	49
3401	48	14692	32	17234	50
18219	40	18643	7	15951	13
14883	15	13702	25	343	30
5916	15	3224	23	12661	44
11143	41	12041	17	3473	40
19835	43	2322	29	19970	32
11794	41	17282	49	1926	14
15221	39	5517	22	7725	15
5664	50	13098	31	18265	3
4304	31	16488	13	7500	7
17030	29	12888	19	512	13
8011	24	16178	26	2151	9
14317	43	7923	36	1926	22
18743	35	4286	5	5727	12
18294	29	15842	24	8462	49
7761	21	5266	49	18970	25
5722	10	303	41	5097	20
11617	49	10763	25	11937	84
17874	48	15932	34	14977	12
4623	23	5214	3	8574	37
10781	4	16185	11	8226	13
2690	31	4525	16	10795	50
17707	13	4585	12	24433	33
9076	20	5864	31	16687	10
9533	42	12144	15	518	44
16217	42	9030	16	7868	22
17375	24	3106	14	8752	15
8201	43	3664	28	555	52
17448	7	17698	39	8371	6
8305	28	11234	39	19836	6
14398	21	16696	4	11402	40
7667	46	11160	8	14152	11
34826	3	9993	31	15038	36
12847	8	12325	9	16865	47
9837	14	11042	11	9118	10
11641	36	11596	3	14332	24
28239	24	8167	38	4008	31
3774	41	15046	50	10116	35
7591	3	5930	20	3291	46
1216	3	13282	13	6073	47
19978	14	4502	32	5642	32
5628	14	14360	30	14962	39
17193	9	12698	18	9638	27
7923	27	3072	37	25871	35
3892	5	1703	31	10936	46
9580	15	2367	19	9917	35
3658	21	3986	37	5378	16
13647	44	13534	37	1960	11
3010	30	13248	6	2158	4
4897	43	12952	9	13447	10
2752	50	328	29	7282	45
15920	47	19407	15	19743	47
7066	35	16061	15	17075	24
12036	38	1984	35	13 25	15
4246	15	11785	34	10840	45
10200	44	9508	14	8230	38
16043	26	9150	38	6362	16
9103	34	8851	21	1322	29
8409	9	14976	37	4128	50
16104	11	15121	46	6598	28
9076	8	10959	45	4994	36
1393	16	6180	5	4525	25
7852	48	7135	34		

Հանգած տիրաժները.

16, 8211, 18172, 8386, 19819, 16329,
12993, 19402, 8612, 17831, 17382, 7868,
11484, 10056, 14059, 10353, 6393, 1906,
19191, 11416, 14866, 6065, 3714, 9412,
19961, 12 80, 16722, 11825, 1793, 8634,
10249, 1322, 832, 17136, 6469, 6478։
12420, 13123, 12663, 18895, 7856, 13512,
15793, 13369, 10262, 15172, 3896, 13178,
1236, 4163, 4953, 15855, 19743, 1416,
12784, 7094, 16285, 9244, 762, 7470,
14167, 1434, 4986, 12299, 665, 3825,
9938, 15814, 10409, 10292, 2264, 4582,
1045, 11263, 2706, 16906, 14998, 16608,
8278, 7676, 17963, 8957, 3294, 2299,
17369, 19527, 2132, 14225, 17274, 18385,
13305, 4720, 2599, 8554, 1614, 13112,
14057, 2409, 17331, 15951, 16942, 19646,
17282, 8130, 12613, 16067, 11413, 9293,
11153. 3331, 9993, 10731, 564, 13710,
1509, 10960, 13713, 6681, 15665, 10714,
5571, 19216, 3812, 1877, 19036, 12852,
7475, 6067, 446, 2236, 1774, 11673,
6459, 16274, 607, 2530, 16003, 6483,
6939, 15503, 9054, 4400, 17750, 8083,
7431, 2356, 2436, 7921, 4245, 1920,
6193, 11273, 1052, 13785, 17559, 19888,
13113, 7898, 14070, 6507, 3546, 13072,
4265, 4518, 1015, 12623, 18479, 5854,
7275, 19564, 8867, 17097, 18777, 10396,
12905, 19368.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Յ. Մ. ՀԻՐԶՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նէարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՁԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՂԱՐԱԳՕԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ —5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.։
Խ. Տ. ԱԲԵԼԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀՐԱՒԷՐ
Մարտի 12-ին, կիրակի, առաւօտեան ժամը 12-ին, ս. Նշան եկեղեցումը ժողով է լինելու, նոր երէցփոխան ընտրելու, ուստի սրանով մեծապատիւ պ.պ. ծխերն երկրորդ և վերջին անգամ հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ եկեղեցումը ընտրութեանը մասնակցելու։
Գործակալ ս. մասին Թիֆլիսի
1—2 Գրիգոր աւագ քահ. Մանդալոնի

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Չորեքշաբթի, մարտի 15-ին, երեկոյեան ժամի 9-ին, նշանակված է անդամների ընդհանուր ժողով՝ ընտրելու պակաս թեկնածուներին, որպէս անդամներ առաջարկված անձանց քուէարկելու, նոյնպէս և քննելու և հաստատելու համար 1906 թ. անելիք ծախսը և ուրիշ տնտեսական հարցեր։ (10,15) 2—3

ԿԵՖԻՐ
Բժիշկներ Սօկոլեան, Գօտերստեն, Շմիդտ, Բիլի և ուրիշ հետազօտութիւնից երևում է, որ կեֆիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեֆիրը գործ է ածվում թոքերի հիւանդութեան, աղիքների կատարի, արեան պակասութեան, ջիջրուկի, (золотуха) դալկահարութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջղերը հանգստացնելու վրա։ Կարելի է ձեռք բերել Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց։ Ցանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը։
(Հ.Կ.) 9—20

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2,
(ա. օ.) 105—300

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելեֆօն № 791։ (ա. օ.) 81—150

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Անցեալ 1905 թւի նոյեմբերի 23—26-ին Գետաբէկում թուրքերի յարձակման ժամանակ անյայտ կորել է նոյն գործարանում բանող տոկար Սարգիս Մուրադեան Ամիրեանցը, որի մօտ եղել է կանխիկ դրամ 200 րուբլի և ներքին փոխառութեան առաջին տոմսակ՝ համար 6688/6։ Սարգիս Մուրադեան Ամիրեանցի կինը սրանով խնդրում է բոլոր բանկերին և վարչութեանը աչքի առաջ ունենալ վերոյիշեալ տոմսակը։ 1—2

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 12 ր. գիշ
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

Ամենահաստատ միջոց սօլիտերի դէմ, (տափակ ճիճու) որով յընթացս քսան և ութ տարվայ բժշկվել են աւելի քան տասը հազար մարդ. ցանկացողները պէտք է դիմեն պատրաստողին՝ հետևեալ հասցէով. Թիֆլիս, Կրասնօվօդսկի փողոց № 36, Մարտիրոս Հախնազարեանցին. գինն է Թիֆլիսում մէկ րուբլի, Թիֆլիսից դուրս, ճանապարհածախսով, հինգ րուբլի, որ ստանալուն պէս իսկոյն ուղարկվում է։ 1—5

ԴԵՌ 1891 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐՎԵԼՈՒ ԷՐ ԶԱՆԱԶԱՆ ԳՈՅՆԵՐՈՎ
„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
Պատկերը, որ այն ժամանակ ինձանից միանգամայն անկախ պատճառով լոյս չը տեսաւ։ Այժմ 14 տարի անցնելուց յետոյ վերջապէս աջողվեց սկսվել «ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-ի տպագրութիւնը, բայց շատ սակաւաթիւ քանակութեամբ, այն էլ միայն նախապէս բաժանորդ գրվողների համար, ուստի ցանկացողները դիմելու են՝ Тифлисъ Вельяминовская № 24. Вардану Варданяну. Գինն է հինգ րուբլի ամեն ծախսով։ Նախապէս կարելի է ուղարկել մի մասը։
ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Պատկերի տպագրութիւնը շատ դժուար և բարդ լինելու պատճառով պատրաստվում է արտասահմանում։ Գոյների թիւն է 90—98, մեծութիւնն է 63×50 սանտ։ «ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերը մի և նոյն ժամանակ ծառայելու է որպէս օրինակ կանվայի վրա կարելու համար։
Բաժանորդագրութիւնը ընդունում է Թիֆլիսում՝ Эриванская пл. обувный магазинъ Абовянца, իսկ Բագու՝ Кондитерская Бр. Филиппосянцъ.

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Элекропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15